

ՊԵՆՅՈՒՆՆԵՐ

محلّة جَمعيّة القاهرة الخيريّة الأرمينية العامّة

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԽՈՒԹԻՒՆ ԳԼՏԻՐԷԻ Հ.Բ.ԸՄԻՈՒԹԵՆՆԵՆ

المدير المسؤول: أ. صاروخان — شارع عماد الدين بالقاهرة — تليفون ٩١٩٦٣٦ — ص.ب. ٧١٧

ԺԳ. ՏԱՐԻ ԹԻՒ 1 - 6

ՅՈՒՆՈՒԱՐ - ՅՈՒՆԻՍ 1969



ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

1869 — 1969

Հ. Բ. Ը. Մ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա. Զ. Դ

- Տեղեկատունն առ այժմ կը հրատարակուի պարբերաբար:
- Թղթակցութեանց, դրամական նուէրներուն, գիրքերուն, քերթերուն եւ հանդեսներուն առարփումները կատարել խմբագրութեանն հասցեին.

Խմբագրութիւն «ՏԵՂԵԿԱՏՈՒ»ի

15, Էմատ Էյ Տին փողոց — Գաճիբէ

Հեռ.ախօս 919636 — Նամակատուի 717

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- 1— Յարութեան Զայնը
- 2— Երկու Հայր
- 3— Զօրավար Անդրանիկ
- 4— Հայրենի Ա.Շխարհ
- 5— Մեծարժէք Արուեստագիտունին
- 6— Յովհաննէս Թումանեան
- 7— Յովհաննէս Թումանեան 1869-1969
- 8— Մեր Պատիշները եւ մեր Գուսանները
- 9— Միսաֆ Թորլաբեան
- 10— Սարգսրապատի Հերոսամարտ
- 11— Հ. Բ. Ը. Միութեան 4րդ Համագումարը
- 12— Ապրիլեան Ազատունը
- 13— Ուսանողները Թումանեանի ծննդավայրին մէջ
- 14— Տիւնամիբը եւ Նոպէլեան մրցանակը
- 15— Սփիւռփախցի կեանք
- 16— Լոյս Երեւան
- 17— Հայրենիքիս հետ
- 18— Յովհաննէս Թումանեան (Կենսագրութիւն)
- 19— Տիրունի

دَيْبِجَارُودُ

مَجَلَّةُ جَمْعِيَّةِ الْقَاهِرَةِ الْخَيْرِيَّةِ الْأَرْمِينِيَّةِ الْعَامَّةِ

ՏԵՉԵԿԱՏՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԼՏԻՈՒԷՒ Հ.Բ.ԸՄՈՒԹԵԼՆ

المدير المسئول: أ. صاروخان — ١٥ شارع عماد الدين بالقاهرة — تليفون ٩١٩٦٣٦ — ص.ب. ٧١٧

ԺԳ. ՏԱՐԻ ԹԻՒ 1 - 6

ՅՈՒՆՈՒԱՐ - ՅՈՒՆԻՍ 1969

Յ Ա Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Ջ Ա Յ Ն Ը

Մեր բովանդակ հոգեկան աշխարհը, իր բոլոր արժեքներով, կառուցուած է յարուքեան յոյսին եւ յաւիտենական գաղափարի պատշաճանդանին վրայ: Առանց յաւէտ ասրելոյ յոյսին, մարդ կը մեռնի մահէն իսկ առաջ, այդ յոյսով, սակայն, կ'այրի մահէն ալ անդին:

Հայ ժողովուրդը, գրեթէ իր ծնած օրէն, բայց մանաւանդ Գրիգորի յարուքեան աւետարանը ընդունելէն վերջ, այսպէս ընթրնեց կեանքը երկրային, այդ հաւատով ասրեցաւ ան ու բարձրացաւ ժամանակի կատարներէն վեր, այդ յոյսով յմեռաւ, այդ յոյսով պիտի այրի ան յաւէտ...: Յարուքեան յոյսով Գրիգոր Լուսաւորիչ Խոր Վիրապ իջաւ: Յարուքեան յոյսով բարգեւանեցին եւ զարդարեցին

իմաստն Անեղին՝ Սահակ եւ Մեսրոպ մեծ սուրբերը մեր եւ աշակերտները անոնց: Յարուքեան յոյսով ինկան Աւարայրի դաշին վրայ Վարդանը Կարմիր եւ իր զինուորները արի: Յարուքեան յոյսով աղօթեց մեծ վարդապետը՝ Խառեկայ վանքին: Յարուքեան յոյսով մեծեց, երգեց Շնորհալիլն Ներսէս: Յարուքեան յոյսով բարձրացան սաճարները մեր իրենց անձառ ձեռերով: Յարուքեան յոյսով սառապեցաւ եւ մարտիրոսանեցաւ ամբողջ ազգը մեր եւ հերոսացան ազաստենց քառակները մեր:

Վ.Ա.ԶԳԷՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ե Բ Կ Ո Ւ Հ Ա Յ Ի

ԶՕՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ

1866 — 1927

1969-ի Փետրուարին կր լրանայ Ամենայն Հայոց Բանաստեղծին ծննդեան 100-ամեակը՝ որ Հայաստանի մ.ջ պիտի տօնուի պէտական տուֆով: Մինչ այդ Յ. Քու- մանեանէն ստեղծ կուտանք գմայլելի էջ մը, որ առնը- ւած է իրական հայ կեանքէ:

1896-ի կոտորածի ձմեռն էր: Խոսմբ մը փախստականներ Սասունի կողմերից հա- սան էջմիածին: Անոնց մէջն էր Էս Ա. գիւ- ղի ծերունի Տէր Սարգիսը:

— Հայրիկի Աջը կ'ոհեմ համբոսել, խնդրեց ան վեհաբանում, ու ներս բողիմ:

— Բարով, Տէր Հայր, Աջը մեկնեց Հայ- րիկը:

Քահանան համբոսեց ու Էտ Եկան, կանգնեց դահլիճի մեջտեղը յոգնած, խոր- տակոսած:

- Ո՞րտեղից կուգաս:
- Սասունի կողմերէն, Էս Ա.ի Տէր Սարգիսն Էմ...
- Ա.ի Տէր Սարգի՞սը...
- Այո՛, Հայրիկ:
- Է՞...

— Ես քսան հոգոսց գերդաստան ունեի, Հայրիկ, տղաներս կոտորեցին, հարսներս տարան. քոսներս կորան, տունս քայանե- ցին, վառեցին. մնացի այսպէս...

- Է հիմի...
- Ես ոչինչ չեմ ուզում, Հայրիկ, Էս... այնպէս, Էկել Էմ... Էկել Էմ Հայրիկին ա- սեմ... այ ոչինչ չեմ ուզում...

Ու Հայրիկի առջեւ կանգնած էր մար- դը, որ ամեն ինչ կորցրել էր Էս ոչինչ չէր ուզում:

- Երկուսն էլ լռու էին:
- Քանի՞ որդի կորցրիր, Տէր Սարգիս, գլուխը վեր քաշեց Կարողիկոսը:
- Ամենքը միասին քսան, Հայրիկ:
- Պոսն քսան որդի կորցրել Էս, իսկ Էս քսան հազար, պատասխանեց Հայրիկը. այդ էլ քսան՝ Էդան քսան հազար ու քսան... Ո՞ւմն է շատ, Տէր Սարգիս...

- Քահանան ցնցոսեց ու լռու կանգնած էր:
- Ո՞ւմ վիշտն է մեծ, Տէր Սարգիս:
- Հայրիկիցը...:
- Գե Է՛կ, Տէր Սարգիս, մօտ Է՛կ, ա-

Զօրավար Անդրանիկ հայոց ժամա- նակակից պատմութեան ամէնէն ժողովրդա- կան ու ամէնէն հետաքրքրական դէմքն Էդաւ, դէմքը Քաջի մը պանծալի ու պաշ- տելի: Անդրանիկի անունը իրապէս երզը- ւեցաւ հայ ժողովուրդին մէջ իր քաջա- գործութիւններուն համար: Հայ երիտա- սարգութիւնը ոգեւորուեցաւ Անդրանիկով: Ժողովուրդին երեւակայութիւնը առասպե- լային թեւեր տուաւ Քաջն Անդրանիկի զին- ւորական պատմութիւններուն, բայց իրա- կանութիւններ էին ատոնք տառապեալ Հայաստանի ամէնէն հայ անկիւններէն մէկուն մէջ:

Յանձին Անդրանիկի կը կորսուի հայ ազգին մեծ զաւակներէն մին:

Անդրանիկ երեւոյթ մըն էր որ փայ- ւեցաւ հայ ժողովուրդի ազատագրութեան գաղափարին հորիզոնին վրայ, իրագործե- լու համար այդ գաղափարը իր անձնա- կան արժանիքով:

Անդրանիկ զինուոր ծնած էր: Շա- պին Գարահիսարի մանկական զպրոցին մէջ իսկ կ'արտացոլար անոր զինուորա- կան տաղանդը իր խաղերուն մէջ:

Անդրանիկ մեր պատմութեան մէջ շատ կը նմանի վահան Մամիկոնեանի, իր արիութիւններով, իր տեսիլներով և մա'նաւանդ իր խմբագործ կռիւներով, և անհաւատալի քաջութիւններով, ամէնուն

չըզ դիր գլխիս, աղօթիր, օրհնիր, որ այս վշտին դիմանամ:

Ասան ու գլուխը խոնարհեց: Քահանան շտապեց առաջ, աջը դրան իր Հայրապետի գլխին. սկսան աղօթք մըր- մնջալ ու աջքերը լցուեցին արտասոսքով...: Նա օրհնում էր Հայոց Կարողիկոսին: Նրա առջեւ խոնարհած էր Հայոց Հայ- րիկը:

1907 ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

(«Երկերի ժողովածու»,
Հատոր Ե. Երեւան)

ալ մէջէն անխոցելի ելլելու պայմանաւ:

Շատ շեշտուած են Անդրանիկի նը-
կարագրին քանի մը գիծերը:

Անվախ էր ան և անձնուէր՝ բառե-
րուն բուն իմաստով: Անվախ էր զինուո-
րական գործողութեանց մէջ, միշտ առ-
ջեւը վտանգին, միշտ գլուխը իր խում-
րին: Աներկիւղ իր խօսքելուն և արտա-
յայտութիւններուն մէջ, իրականութիւնը,
ստուգութիւնները, ճշմարտութիւնները ար-
տայայտելուն մէջ:

Շատ լաւ կը ճանչնար իր կոխած գե-
տինը: Արդարասէր էր ան: Հայ ժողո-
վուրդին ազատագրութիւնը Արդարու-
թեան մէկ պահանջն էր իր համոզումով:
Հետեւաբար ան կոռեցաւ Արդար գատի
մը համար, և կոռեցաւ արգարութեամբ:
Սասնոյ քիւրտերն իսկ իրենց բոլոր տը-
գիտութեամբ և նախապաշարումով Ան-
դրանիկին անխոցելութիւնը կը բացա-
տրէին անոր արդարասիրութեամբը: Ա-
նոնք կ'ըսէին՝ արդար մարդը չի խոցուիր,
չի վիրաւորուիր, Անդրանիկ արդար մարդ
է, ան ոչ կը վիրաւորուիր, ոչ ալ թշնա-
միլին ձեռքով կ'իջնայ: Աստուած անոր
հետ է:

Անդրանիկ անկախ էր իր հոգիով և
իր տրամադրութիւններով: Ան չկուսակ-
ցականացուց Ազգային Դատը որուն հա-
մար կոռեցաւ և գիւցազնացաւ այդ կը-
ռիւններուն մէջ: Կուսակցութեանց հետ գոր-
ծեց, բայց կուսակցական մը չեղաւ և չու-
զեց ըլլալ: Ազգային շահը ամէն բանէ վեր
էր և ամէն բանէ նուիրական էր իրեն
համար: Կուսակցական նեղմտութեան դէմ
պռտկաց իր հոգիի խորերէն և ատով
անգամ մըն ալ շեշտեց իր նկարագրին
անկախութիւնն ու արգարասիրութիւնը:

Հաւատացեալ մըն էր Անդրանիկ,
հաւատացեալ թէ՛ իբրեւ զաւակ Հայաս-
տանյեաց եկեղեցւոյ և թէ՛ իբրեւ յեղափո-
խական գործիչը այն գատին, որուն անձ-
նուէր զինուորն էր եղած:

Պերճախօս մըն էր Անդրանիկ: Իր
պերճախօսութեան զսպանակներն էին իր
անվախութիւնը, իր արդարասիրտօրէիւնը,
նախատրը:

Կրնար ժամերով խօսիլ և մտիկ ընել

ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀ

ԱՍՐՏԱՐԱՊԱՏԻ հերոսամարտին 50ամ-
եակին առիթով, համանուն վայրի մէկ
բարձունքին վրայ զբօսայգի-յուշարձանին
պաշտօնական բացումը կատարուած է
Մայիս 25-ին, հայրենի պետական աւա-
զանիի և հարիւր հազարի հասնող բազ-
մութեան մը մասնակցութեամբ: Ճարտա-
րապետական այս համակառոյցին հեղի-
նակներն են ճարտարագետ Ռ. Իսրայէլ-
եան և քանդակագործներ Ա. Յարութիւն-
եան, Ա. Շահինեան, Ա. Մանասեան:

Զբօսայգիի հրապարակին վրայ, դէ-
պի վեր կը խոյանայ 35 մեթր բարձրու-
թեամբ կամարաշար գանգակատուն մը:

— Երեմիայի մէջ Ապրիլ 15-17 տեղի ու-
նեցած է Հայաստանի Նկարիչներու Միու-
թեան Զրգ համագումարը, որուն բացումը
կատարած է Մարտիրոս Սարեան: Միու-
թիւնը ներկայիս 326 անդամ ունի, որուն
նախագահն էր Մհեր Աբեղեան: Համա-
գումարը նոր նախագահ ընտրած է նկա-
րիչ Գ. Գիւրջեանը:

տալ ինքզինքը: Զօրաւոր յիշողութեան
մը տէր, գիտէր դէպքերու և դէմքերու
և թուականներու ճշգրիտ վերյիշումներով
զօրացնել իր ըսածներուն փաստերը: Ան-
խընայ էր իր դիտողութիւններուն մէջ:
Չէր ներեր սուտի, կեղծիքի, շողովանքի:
Իր զինուորի տաղանդն ու ծառայութիւն-
ները գնահատուեցան ուսու և անգլիական
զինուորական իշխանութիւններու կողմէ:
Հայ զինուորին արժանիքը օտարը գնահա-
տեց — Զօրավարի աստիճանով:

Մահացաւ Անդրանիկ, բայց կ'ապրի
Ան հայութեան սրտին և յուշքին մէջ:

Ապագայի ներշնչումի խորհրդանշանը
պիտի ըլլայ Անդրանիկ, իբրեւ ազգային
հերոս, գալիք սերունդներուն համար:

Յարգանք իր յիշատակին:

Հանգիստ իր արի և բարի հոգւոյն:

ԲԱՒԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԱՆԻԻ 1000-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ

ԶԲՕՍԱՅԳԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՅՈՒՄԸ

Լենինականէն հարաւ - արեւմուտք տարածւող բարձունքի վրայ այժմ կ'աճին վարսաթափ ուռնիներ, ակասիաներ, սլացիկ բարդիներ:

1968 Յունիս 9-ի Կիրակի օրը, քաղաքի ոչխատաւորները խումբերով գացին մանակցելու աշխարհառչակ Անիի 1000-ամեակին նուիրուած զբօսայգի-յուշարձանի հանդիսաւոր բացմանը:

Խիտ ծառախումբերէն վեր, այնտեղ, սւսկից կը սկսի դէպի զբօսայգիի խորքը տանող աստիճաններն ու ասֆալտապատ ծառուղիները, հոյակապ կոթող մը կը բարձրանայ, որ նուիրուած է քաղաքամայր Անիի 1000-ամեակին: Այս կոթողը կառուցուած է Անիէն բերուած կարմիր տուֆ քարէ և ունի 15 մեթր բարձրութիւն: Զարդաքանդակները կը խորհրդանշեն երբեմնի ծաղկուն ու շէն Անիի, գեղեցկագոյն այդ քաղաքի վսեմ ճարտարապետութիւնը, որ լուսաւորուած է Տրդատ մեծ ճարտարապետի հանձարին շողերով: Յուշարձանը վերի մասին վրայ կը տեսնուի Բագրատունիներու թագաւորութեան զինանշանը, առիւծը ընթացքի պահուն, որ միաժամանակ հայ ժողովրդի հզոր և անընկճելի կամքին մարմնացումն է: Յուշարձանի ամբողջականութեան բաղկացուցիչ մասը կը կազմէ աղբիւր-յուշարձանը, որուն սրբատաշ ու արեւահայեաց պատին փորագրուած են Աւետիք Իսահակեանի և Յովհաննէս Շիրազի բանաստեղծութիւններէն տողեր:

Յուշարձանի նախագծի հեղինակներն են անուանի ճարտարապետներ Յակոբ Զիվանեանը և Ռաֆիկ Եղոյեանը: Առաջինը կատարած է նաեւ զարդաքանդակները: Յուշարձանի կառուցման վրայ աշխատած են քարտաշ-որմնադիր Սարգիս Մնոյեանը և քաղաքի տաղանդաւոր շինարարների ներկայացուցիչները:

ԴԱՒԻԹ ԲԷԿԻ ՅՈՒՇԱՐՁԱՆ-ՀԱՄԱԿԱՌՈՅՑ ԴԱՓԱՆՈՒՄ— Կը նախատեսուի Ղափանի մէջ կառուցանել մշակոյթի ու

հանգիստի մեծ զբօսայգի որուն նախագիծի կեդրոնական տեղը յատկացուած է Դաւիթ Բէկի յուշարձան-համակառոյցին՝ և որուն կառուցման աշխատանքները վաղուց սկսած են: Նախագծի հեղինակներն են վաստակաւոր նկարիչ և քանդակագործ Գ. Բաթալեանը, և ճարտարապետ Վ. Սահակեանը:

Դաւիթ Բէկի յուշարձանը պէտք է յիշեցնէ հայ ժողովուրդի հերոսական պատմութեան հոյակապ էջերէն մէկը, ցայտուն կերպով վկայելով անոր ազատասիրութիւնը և խոր հայրենասիրութիւնը:

ՄԱՀ ՎԱՀՐԱՄ ՓՈՓՈՋԵԱՆԻ.— Յունիս 5ին, իր մահկանացուն կնքեց Վահրամ փափազեան անուանի դերասանը երբ այցելութեամբ Լենինկրատ կը գտնուէր: Թաղումը կատարուած է Երևանի Պանթէոնին մէջ մեծ շաքով: Հայ բեմի 60 տարուան այս մեծ վաստակաւորը նոր բոլորած էր իր ծննդեան 80-ամեակը:

ԻՐԱՆԻ ԱՐՔԱՅԻՑ ԱՐՔԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ.— Իրանի շահնշահ Մոհամէտ Ռիզա Փեհլեւին և իր հետեւողները, որոնք Հայաստան այցելեցին, Հոկտեմբեր 2ին, Հայաստանի Գերագոյն Սովետի նախագահ Ն. Յարութիւնեանի և նախարարաց խորհուրդի նախագահ Բ. Մուրատեանի և այլ պաշտօնական անձերու ուղեկցութեամբ այցիկ գացին Սր. Մեսրոպի անուան ձօնուած մատենադարանը, ուր մեծարգոյ հիւրերուն յայտնեցին թէ մատենադարանին մէջ կը պահուին պարսկերէն, արաբերէն, յունարէն, լատիներէն, եթովպերէն և այլ լեզուներով 1500 ձեռագիրներ:

Վեհափառ ինքնակալը հիւրերու մատենանին մէջ հետեւեալ տողերը արձանագրեց. «Չափազանց հետաքրքրական էր դիտել մատենադարանը, որն ունի հնագոյն յիշատակարաններ՝ ձեռագիրներ: Ես հաճոյքով ծանօթացայ Հայաստանի հին պատմութեանը: Այն ամէնը, ինչ այստեղ կայ լաւ է օգնում Սովետ. Միութեան ժողովուրդների պատմութեան ուսումնասիրութեանը:

Խիստ հաճելի է ու այն ամէնը, ինչ մենք տեսանք, խնամքով պահպանուում է

և ծարալյում մարդկութեան շահերուն»։
 Իրանի պետութեան ղեկավարին նը-
 ւերուեցան «Հայկական մանրանկարչու-
 թիւն» և «Մատենագարան» գիրքերը, ինչ-
 պէս նաեւ հայ-իրանական յարաբերու-
 թիւններուն վերաբերեալ աշխատութիւն-
 ներ, որոնք Հայաստանի մէջ հրատարակ-
 ւած են։

Վեհապետը այնուհետեւ շրջագայե-
 ցաւ Երեւանի մէջ, ծանօթացաւ մայրա-
 քաղաքի ճարտարապետական անսամբլնե-
 րուն և նորակառոյցներուն։

Նոյն օրը Իրանի պետութեան ղեկա-
 վարը այցելեց Սեւան։ Վերադարձին Ալ.
 Սպենդիարեանի անուան օփերայի և պա-
 լէի ակադեմական թատրոնին մէջ կայա-
 ցաւ արուեստագէտ երու մեծ համերգը։
 Գահլիճը վարդաբուած էր իրանական, մի-
 ութենական և հայկական պետական գրօշ-
 ներով։ Համերգի սկզբնուերութեան կա-
 տարուեցան հայկական, իրանական և մի-
 ութենական հիմները։ Նոյն օրը, երեկոյ-
 եան, Իրանի վեհապետին ի պատիւ ճաշ-
 կերոյթ մը արուեցաւ հայկական կառա-
 վարութեան կողմէ։ Նախագահ Ն. Յարու-
 թիւնեան ջերմօրէն ողջունեց հարեան և
 բարեկամ իրանական պետութեան շահն-
 շահը և աշխատասէր ու տաղանդաւոր
 ժողովուրդը։

Շահը խօսք անելով ըսաւ. «Մենք
 Հայաստանի մէջ ոչ միայն ակահատես
 եղանք ձեր սիրալիք հիւրընկալութեան, որ
 զերազանց էր, այլև հնարաւորութիւն ու-
 նեցանք ակահատես ըլլալու այն մեծ գոր-
 ծերուն, զորս դուք կատարած էք վերջին
 50 տարուան ընթացքին։ Ես այս բաժակը
 կ'առաջարկեմ Սովետ. Միութեան ղեկա-
 վարներուն կենացը, ձեր կենացը, Պր. Նա-
 խագահ, և տաղանդաւոր հայ ժողովուրդի
 կենացը»։

ՀՈԿՏԵՄԲԵՐ 17.— Սկսան քաղաքա-
 մայր Երեւանի 2750-ամեակին նուիրուած
 հանդիսութիւնները։ Այս առթիւ Երեւան
 ժամանած էին Սովետ. Միութենէն և հայ-
 կական գազութներէ ներկայացուցչական
 բա մաթիւ գէմքեր, ինչպէս նաեւ պետա-
 կան ղեկավարութեան մաս կազմող անձ-

նաւորութիւններ, գիտական գէմքեր, ար-
 ւեստագէտներ և երիտասարդական պատ-
 ւիրակութիւններ։

ՀՈԿՏԵՄԲԵՐ 19.— Սպենդիարեանի
 անուան պետական Օփերայի հսկայ դահ-
 լիճին մէջ տեղի ունեցաւ միթինգ՝ ազգիս
 Վեհապետ Հայրապետի ներկայութեան։
 Ներկայ էին նոյնպէս Հայաստանի պետա-
 կան գէմքերը, մարաջախտներ՝ Բաղրամ-
 եանն ու Պապաջանեանը, «Միկ» օդանա-
 ւերու հնարիչ Արտէմ Միկոյեանը և այլք։

ՀՈԿՏԵՄԲԵՐ 20.— Կատարուեցաւ
 բացումը Երեւանի հիմնադրման թանգա-
 րանին և տեղի ունեցաւ այցելութիւնը Է-
 րէքունի ամբոյցին, որուն պահակազօրքը
 զգեստաւորուած էր Ուրարտական հագուստ
 ներով։ Նորատունի 2750 ծառեր էրէքունի
 լանջքը պիտի կանաչադարդեն մօտ ազա-
 գային։

ՀՈԿՏԵՄԲԵՐ 21.— Մեծ համերգ Հայ
 Ֆիլարմոնիայի դահլիճին մէջ, ուր հան-
 դէս եկաւ 2750 հոգիէ կազմուած երգչա-
 խումբը, որուն կը մասնակցէր նաեւ մեր
 սիրելի Միքայէլ Գարանֆիլեանը, որ յա-
 տուկ հրաւերով քաղաքամայր Երեւան
 հրաւիրուած էր։

Այս առնահանդէսին առնչութեամբ
 հրապարակ հանուած են էրէքունի և Արին-
 բերդ անունով գլանիկներ, ինչպէս նաեւ
 Հայկ. Խաչատուրեանի էրէքունի ծաւալուն
 վէպը, որ արդէն սպառած է։

Ժողովրդային բոլոր խաւերուն մէջ,
 վերածննդ հայրենիքի քաղաքամայր Երե-
 ւանի 2750-րդ տարեդարձը մեծ խանդավա-
 ութիւն ստեղծեց։

ՅՈՐԵԼԻԻՆԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԱԿԱ-
 ԴԵՄԱԿԱՆ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ.— Երե-
 ւանի օփերայի թատերասրահին մէջ, Սեպ
 տեմբեր 19-ին մեծ հանդիսութեամբ նըշ-
 ւած է ակադ. Վ. Համբարձումեանի ծը-
 ննդեան 60-ամեակը։ Այս առթիւ ներկայ
 գտնուած են օտար երկիրներէ յատկապէս
 ժամանած անուանի աստղագէտներ և
 գիտնականներ։ Նախագահութեան մաս

ՄԵԾԱՐԺԷՔ ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏՈՒՅԻՆ

1966ին Մոսկուայի մէջ տեղի ունեցած Չայքովսքիի միջազգային երաժշտական մրցումին թաւջութակի առաջին մրցանակը շահեցաւ Օր. Կարինէ Գէորգեանը: Արւեստագէտ օրիորդը մեծանուն երգահան

կազմած են Հայաստանի պետութեան աւաջնորդող գէմքերը: Յորելինական երեկոյթը բացած է Հայաստանի նախարարներու խորհուրդի նախագահի տեղակալ Լ. Ստեփանեան, որ շեշտը դրած է հայ աւագեմականին կատարած հոյակապ գործին վրայ. յատկապէս՝ Հայաստանի մէջ երիտասարդ գիտնականներ պատրաստելու և գիտութեան զարգացման նպաստելու ուղղութեամբ:

Ն. Բարութիւնեան, Հայաստանի Գերագոյն խորհուրդի նախագահութեան նախագահը, իր կարգին դիտել տուած է թէ «իր ամբողջ կեանքը նուիրելով տիեզերքի կառուցուածքին, աստղերու և ծիրկաթիններու ծագման և զարգացման ուսումնասիրութեան, Վ. Համբարձումեանը կարողացած է իր արժանաւոր աւանդը մուծել աստղապիտութեան՝ հնագոյն բայց միաժամանակ նոր գիտութեան մէջ: Իր ամբողջ կեանքով և գործունէութեամբ Վ. Համբարձումեան կրկին կը հաստատէ այն յաւերժ ճշմարտութիւնը, որ իւրաքանչիւր ժողովուրդի գաւակ համաշխարհային մեծութիւն կը դառնայ միայն այն ժամանակ, երբ կը յաջողի իմաստաւորել իր ժողովուրդին բազմազարեան աւանդները, երբ կ'ապրի իր ժողովուրդին խոհերով և անոր նուիրական ձգտումներով»:

Յաջորդաբար խօսք առած են Ա. Գոչինեան, Խ. Միլութեան Գիտութիւններու ակադեմիայի նախագահներէն Կոտեշնիկով, ինչպէս և Խ. Միլութեան բաղկացուցիչ հանրապետութեանց ներկայացուցիչները:

Վերջին խօսողը եղած է յորելեարը, որ շնորհակալութիւն յայտնած է իր գործին հանդէպ արտայայտուած գնահատանքի խօսքերուն համար:

և խմբավար Արամ Խաչատրեանի տարւոյս սկիզբները կազմակերպած երկոտասնեակ մը երգահաններուն իբր մենակատար ճարտարօրէն նուագեց վարպետին «Թաւջութակի Գոնչերթօ»ն: Ամերիկեան մամուլը՝ «Նիւ Եորք Թայմզ», «Խնտիանոբոլիս», «Սթար», «Քէնսաս Սիթի» և «Թայմզ» ճերբողալից տողեր նուիրեցին և ՉՅամեայ հայուհին կարողութիւնը գովեցին:

Մարտ 23ի երեկոյեան, Քարնեկի Հոլին մէջ Կարինէ Գէորգեան տուաւ նուագահանողէս մը, որուն հոգեզմայլ արգիւնքը գերալանցեց բոլոր նախատեսութիւններն ու կատարուած գնահատական արտայայտութիւնները:

Օր. Կարինէի յայտագիրը 'ը բաղկանար մեծ վարպետներու գործերէն: Ան խոր հասկացողութեամբ նուագեց:

Պախի Suite No. 5 for Cello Unacompanied, Պրամի Sonate in E Minor for Cello and Piano, Բուպրեթի Sonata for Arpeggione and Piano, Շոստաքովիչի Sonata for Cello and Piano ստեղծագործութիւնները: Վերջին երեք գործերուն գաշակի վրայ ընկերակցեցաւ ամերիկացի գաշնակահար Սամուէլ Սէնտըրլ:

Օր. Կարինէ Գէորգեան սկսած է թաւջութակի դասեր առնել իր հօրմէն՝ փրոֆ. Արմէն Գէորգեանէն, որ գնահատուած թաւջութակահար մըն է, որ ոսկի շքանը շանով աւարտած է Մոսկուայի Կնեսինի երաժշտական դպրոցը, և ապա հետեւած Մոսկուայի երաժշտանոցին մէջ հաստատուած ուսանողներու դասընթացքներուն, աշխարհահռչակ թաւջութակահար Ռոսթրօփովիչի հսկողութեան տակ:

Կարինէ Գէորգեան զաւակն է այս պատուական արուեստագէտին, որ օժտուած է նուրբ ճաշակով, բանաստեղծական խառնուածքով և ուժեղ թեքնիքով և սահմանուած է տիրական դէմք մը դառնալու միջազգային երաժշտական աշխարհին մէջ:

Ամփոփուած «ՅԵՂԵԿԱՐ»

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԲՈԼՈՐ ՍԵՐՈՒՆԴՆԵՐՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԸ

(Ծննդեան հարիւրամեակին առթիւ)

«Մեր իսկական ազգային բանասէղծն էան, մեր գրականութեան անմահ փառքը»:

Ա. Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ

Ան բանաստեղծ էր «կամօքն Աստուծոյ», այսինքն՝ ծնած էր բանաստեղծ, եւ ոչ թէ պարաստուհեցաւ իր միջավայրին (ժողովուրդին) մեջ կալ գաստիարակութեամբ, ուսուցմով:

Եւ՛ բնութեանն ընծայ ստացած իր այս խառնուածքը, ապա անկէ բխող տաղանդը, ան, փոխանակ մղելու միայն դեպի անձնական յոյզերն ու մտորումները, տրամադրեց ժողովուրդին, զարեբէն եկող անոր աւանդութիւններուն, եռեռեփող անոր Յերկայ կեանքին, եւ անոր բնական, արդար ձգտումներուն:

Չյաջողիլը անկարելի էր Թումանեանին համար, որովհետեւ, ժողովուրդին եւ անոր հին ու նոր հոգի-աշխարհին կառչելով, կառչած կ'ըլլար աղբիւրներէն ամենէն ապահովին եւ գորեղին, հարստութեան եւ անկորնչելիին:

Ու այս նամբուն վրայ, մենք ունեցանք ժողովրդական առասպելներու, հեքիաթներու, գրոյցներու, անանդութիւններու գրական մշակուածը, արձակով թէ ոտանաւորով, «շնորհ»ով, ինչպէս կ'ըսէր ինք:

Հայ ժողովուրդի պէս նահապետական զարանոր ժողովուրդի մը անցեալը, որ փառքի էջերու կարգին կը պարունակէ նաեւ տխրութեան ու թախիծի դրուագներ, բնական է՝ որ մարդոց հոգիներուն վրայ գրոշմած ըլլայ իր կնիքը: Թումանեան մեր պատմութեան սխրագործութեանց կարգին՝ հարազատ արձանագրիչը եղած է նաեւ մեր ժողովուրդի ցաներուն եւ յուսախաբութեանց Արձանագրիչը, — այս բառը չի տար նշմարիտ իմաստը Թումանեանի հանգամանքին, վասնզի Թումանեան յուսանկարիչ-գրող մը չէր. անխոսափելիօրէն, իր ամէն մէկ փոխադրումին մեջ, պիտի տիրապետէր տա-

ղանդը, ամենէն հասարակ պատկերը վերածելու համար դիւրական տեսարանի մը, ինքնատիպ եւ պարզամտ: Անկէն՝ բափանցած կամ նոյնացած ըլլալով ժողովուրդի առհասական ու գալիք կեանքին եւ անոր իմաստին, Թումանեան ի՛նք պիտի յօրինէր — եւ յօրինէր — հեքիաթներ, որոնք չէին կրնար մեր ժողովուրդի հոգիին հարազատ ցոյացումը չըլլայ...:

Սարսափի եւ եղեռնի իրողութեանց — առթուած զաժան բնութեանն կամ անողոր բռնակայներէ — դիմաց, ժողովուրդի գործօն կամ կրաւորական դիմադրութեան արիագեղ բանդակներ, որոնք կը յանրժաման Թումանեանի գրչին տակ ու կը յանրժամացնեն ցեղի առաքինութեան ու մեծութեան փաստը: Առ այս՝ *Ազաւնու վանքը*՝ ցնցող ժայթք մը չէ՞:

Առանելութիւնն այն է, որ տխուր դեպքերու տխրագոյն ընթացքը — որուն չի հանդուրժէր արուեստագետը, ո՛չ ալ գիտնականը — Թումանեանի խղինն առջեւ կը զգենու. արդարացումի, նուիրագործումի պատմունան մը: Գեղարուեստական բարձր կարողութիւնը թոյլ չի տար, որ մեր գգալարանքները մերժումի կամ ընդդիմութեան փորձ մը կատարեն, ինքնեկ կամ գիտակցական:

Անուշի վրեժխնդրական եւ քիչ մը նուաստացուցիչ պարագան, մենք հանդուրժողութեամբ կը տանինք, կը կարդանք կամ կը լսենք՝ բնագործին վրայով, անկախաբար Արմէն Տիգրանեանի օփերայական հարտարութեան բերած նպատէն, կամ անկէ առաջ:

Ողբերգական կամ սխրալի էլքերը Թումանեանի պատմութիւններուն — *Գիւրբիւն*, *Կաթիլ մը մեղրին*, *Լոռեցի Սաքոյի*ն էին.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

1869 — 1969

*Յովհաննէս Թումանեան մեր ազգա-
գային-գրական և հանրային կեանքի որ-
պէս գործիչ, է ու կը մնայ փառաւոր
դէմք մը, որ իր նուիրեալ գործունէու-
թեամբը պանծալի յիշատակ մը թողու-
ցած է իր յետնորդներուն: Զինքը «ամե-
նայն հայոց բանաստեղծ»ի տիտղոսով կը
ճանչնանք, որովհետեւ ան կը խտացնէ իր
քերթուածներուն մէջ, հայ ժողովուրդի*

— Ես պոեմներուն — ինչպէս Աղբաւարին
Սասունցի Դաւիթին — մեզ իրենց ընտելա-
ցոցած կ'ըլլան արդէն՝ նամբոս ընթացքին,
ոս մեր խիղճը կամ գիտակցութիւնը ոչ մէկ
ընդվզում կ'ունենայ հերոսներուն դէմ, ինչ-
պէս Շէքսպիրի ողբերգութիւններուն մէջ:
Մենք զոհերուն հետ ենք ես, Թումանեանի
կախարդող բառերուն ու հոսող պատկերնե-
րուն դիմաց՝ դէմ կ'ելլանք բնութեան, դէմ
կ'ելլանք նոյնիսկ Արարչին, դէմ ըլլալով
անպայման՝ Անոր ստեղծած անիրաւին, ջա-
րին ու բռնակալին...

Առօրեայ կեանքէն վերցուած իր պատ
մուսածքներուն ես պատկերներուն մէջ,
մի՛շտ ժողովրդապաշտ իր խորքին հա-
ւատարիմ, Թումանեան կը հանդիսանայ լա-
ռաջղիմական ընկերաբանը եւ գեղագետը:
Իրապաշտ պատմութիւններ, ընկերային դա-
սակարգներու միջեւ տիրող անհասարակ-
ութեան, զօրաւորին կողմէ գործուած անար-
դարութեանց եւ շահագործումին, ու հնա-
րամիտ քաղքենի-ընջարացներու անիրա-
ւութեանց մասին: *Վարպեան ու աշկերտը,
Գիքորը, Իմ ընկեր Ներսէն, Զարի վախ-
ճանը՝* շինական դասակարգի տառապանքի
դիւցազներգութիւններն են:

Գեղարուեստական գրականութեամբ
տրուած իմաստասիրական իր մտորումները,
ապա երգիծական իր էջերը — *Բանաստեղծ
մը և ճանճ մը, Շունն ու կատուն,* ինչ-
պէս նաեւ մանուկներուն համար գրեաժ
կենդանական աշխարհի իր փոխաբերական
ստեղծագործութիւնները, բիչ մը անելի կը
շեշտեն իր ծառայումը քաղքենի — դրամա-
տիրական կամ ծրուած ազգայնամոլութեան
շրջանակներուն դէմ: Բնական է, շատ հա-
նոյալի ընդունելութիւն չէ որ գտած են
Թումանեանի այս գրութիւնները այն ատեն.
մինչ մենք այսօր կը հպարտանանք անոնց-
մով:

Թումանեան, որ ընտիր գրող մը ըլլա-
լով մեկտեղ խիստ ժողովրդական մարդ մըն
էր, նշանաւոր է իր հիւրամեծարութեամբ,
բացուած սեղաններուն իբրեւ «բամառա»
մեծ է իր հռչակը: Ան մաս կը կազմէր
«վերնատուն» անուն գրական խմբակցու-
թեան՝ Ղազար Աղայեանի, Լ. Շանթի, Գ.

Դեմիրջեանի եւ Ն. Աղբալեանի հետ: Ոս,
յոգուածներով եւ դասախօսութիւններով
եւս պայքարած է մեր ժողովուրդի յառաջ-
դիմութեան ու մեր գրականութեան մա-
կարդակի բարձրացման ի խնդիր, ձեռնար-
կելով նաեւ հայ գրական լեզուին բիրե-
ղացման, նոխացման ու գեղեցկացման
գործին:

Մարդուն մէջ մարդկայինի յաղթանա-
կին եւ ժողովուրդի ազատագրման — քա-
ղարական բռնակալութիւններէ եւ մտայնու-
թեանց ստրկութենէն — համար պայքարի
իր նամբան պահ մը անցած է նաեւ քաղա-
քական ու լեզուափոխական մարզերէն, ու
Թումանեան բանտարկուած այ է:

Թումանեանի գրականութիւնն ու անձ-
նաորութիւնը, իր ողջութեանը, սիրուած
ու գնահատուած են մեր ժողովուրդի արեւ-
ելեան եւ արեւմտեան հատուածներէն հա-
ւասարապէս. ու, արդարօրէն, զայն կոչած
են «ամենայն հայոց բանաստեղծը»:

Թումանեանի գրականութիւնը, իր ու-
ժեղ հայեցիութեան եւ հարազատութեան
յատկութիւններուն հետ, կը գտնուի համա-
մարդկային աստիճանի արժեքի կշիռի մը
մէջ, ու գտած է մեծ ժողովրդականութիւն՝
բոլոր այն ազգերէն, որոնց լեզուին քարգ-
մանուած են իր երկերը:

Թումանեան, կը համարձակիմ ըսել,
աշխարհի բոլոր ժամանակներու երիտա-
ւարդութեան, յառաջագիւմ եւ ջկատող երի-
տասարդութեան բանաստեղծն է...:

լաւ ու գէշ բարքերը, տրամադրութիւնները և ձգտումները:

«Ամենայն հայոց բանաստեղծ» էր ան. իր քերթողական շունչի լալեռութեամբ: Իր ստեղծագործութիւնները, իրենց ամբողջութեանը մէջ, եղակի տեղ մը կը գրաւեն մեր բանաստեղծական գրականութեան անգաստանին մէջ: Վերջապէս, «ամենայն հայոց բանաստեղծ» էր Թումանեանը իր աննախընթաց ժողովրդականութեամբ:

Մանուկներու համար իր գրուածքները ստուերի մէջ թողուցին Ղազարոս Աղայեանը և այլ գրողէտներու դործերը: Ժողովրդական կենսագրագէտ դանգրւածներու մէջ, ո՛չ մէկ հայ բանաստեղծ այնքան կարգացուած, հասկցուած և զընահատուած չէ, որքան Թումանեանը: Գրական ճաշակ ունեցող հասարակութեան մէջ եւս ան մեր ժամանակուայ ամենամեծ հայ բանաստեղծի հռչակն ունի:

Վաղերի Բրիւսով, յայտնի ուռւ հայագէտ մտաւորականը, համաշխարհային պատերազմէն առաջ կը պնդէր նոյնիսկ, թէ Ռուսիոյ այն ժամանակուայ բանաստեղծներէն և ո՛չ մէկը կրնար մրցիլ Թումանեանի հետ: Սակայն Թումանեանը ո՛չ միայն իբրեւ գրող, այլև իբրեւ անձնաւորութիւն խիստ հետաքրքրական տիպար մը կը ներկայացնէ:

Վաստահօրէն կարելի է ըսել, թէ զինքը ճանչցողները, իր բարեկամները կամ նոյնիսկ հակառակորդները. իր մահուան առթիւ, ողբացին ոչ միայն անզուգական բանաստեղծի այլև Վերին աստիճանի ինքնատիպ մարդու անհետացումը մեր հանրային կեանքի առպարէզէն: Այս պատճառաւ ալ աւելորդ չենք նկատեր իր մասին քանի մը ծանօթութիւններ հիամցընել «ՏԵՂԵԿԱՏՈՒ»-ի ընթերցողներուն:

Թումանեանը պարծանքով կ'ըսէր. թէ ինք Մամիկոնեան իշխաններու շառաւիղէն է:

1894ին, Թիֆլիսի մէջ ընդ տեսած «ՀՈՐԻՉՈՆ» գրական հանդէսին մէջ «Քաջերի կեանքից» յօդուածին մէջ ան կը գրէր թէ իրենց տոհմը հին, արևուտական տոհմերէն է, որ կը սերէր Մամիկոնեաննե-

րէն, որոնք 10րդ դարուն Տարօնէն գալով եկան հաստատուեցան Լոռիի Գսեղ գիւղը:

Մամիկոնեան իշխաններու Գսեղ գիւղը հաստատուելը փաստ է զոր կը վկայեն գիւղի գերեզմանաքարերը, Մամիկոնեան տոհմի յիշատակին կանգնեցուած գեղեցիկ խաչքարերով և բարձրաքաշ Ս, Գրիգոր վանքի աւերակներով:

Այն հարցումին թէ ի՞նչի վրայ կը հիմնուի պնդելու համար որ իր տոհմը կապ ունի Մամիկոնեաններու հետ, Թումանեան կը պտտասխանէր. — «Նախ մեր ընտանիքի մէջ մնացած աւանզութեանց վրայ երկտրոգ՝ գիւղի պատմական գերեզմանատան մէջ գտնուող այն տապանաքարին որուն վրայ Մամիկոնեան իշխանը միաժամանակ և «Տէրանց» իշխան արձանագրուած է, իսկ Գսեղ գիւղի ժողովուրդը կը վկայէ թէ, Թումանեան տունը կը կոչուի նաև «Տէրանց» տուն»:

Թումանեան հպարտ էր մանաւանդ իր պապերէն Յովակիմ Մեհրաբեան Թումանեանով, որուն ինչպէստէր Սերգեանը հետեւեալ տողերը նուիրած է «Վէրք Հայաստանի»-ի մէջ. —

«Սարերի, ձորերի միջում մեծացած, գալանի ու հարամի արիւնը թափելով էր նրա սակորները հաստացել, երկու տղամարդ նրա մէջքը չէին կարող խտտել, հինգ մարդ նրա մէկ ձեռքը չէին կարող ուղրել, նրա գլուխը մէկ օր չէր ցաւել: Կերածը՝ մեղր ու կարագ էր, հագածը՝ շալ, կոխածը՝ ծաղիկ ու չիման: Նրան ի՞նչ կը գիմանար: Աժգահա ու ոչ տրզամարդ»:

Սակայն այս տոհմական հպարտութիւնը Թումանեանի մօտ ազնուական գորոզութեամբ չէր արտայայտուէր, որ յաճախ կարելի էր տեսնել, օրինակ Ղարաբաղի մեղիքներու նոյնիսկ կը թուած յետնորդներու մօտ: Թումանեանը շատ ժողովրդական և ընկերական մարդ էր. մեծի հետ՝ մեծ, փոքրի հետ՝ փոքր և ամէնքի հետ խոսարհ ու սիրալիր: Իր տոհմական հպարտութիւնը այլ տրամադրութեանց սնունդ կուտար:

Ասոնց առաջինն է հայրենասիրորթ իսկը, որով ինչպէս յայտնի է, Մամի-

կոնեան տոհմը այնքա՛ն փայլած է մեր պատմութեան մէջ:

Թումանեան հայրենասէր էր բառին լաւագոյն իմաստով՝ հայ հայրենիքը, հայ ժողովուրդը իբրեւ ազգային ուրոյն հաւաքականութիւն, հայկական հանճարի հին արտագրութիւնները, մեր ազգային մշակոյթի ներկան ու ապագան անջնջելիօրէն կապուած էին իր հոգիին հետ: Անկեղծօրէն կը հրճուէր երբ լուսաւոր բան մը կը յայտնագործուէր մեր անցեալի կամ ներկայի մէջ և խորապէս կը ցաւէր մեր հին ու նոր կեանքի յոռի կողմերուն վրայ:

Այս հայրենասիրութիւնը պատոնական չէր, այլ խիստ գործօն. որովհետեւ ան կը խթանուէր շարունակ հանրային գործ կատարելու տրամադրութեամբ, որ խիստ տիրական էր Թումանեանի մօտ և անոր նկարագրին երկրորդ յատկանիւն էր: Հակառակ մեր բազմաթիւ գրողներուն, որոնք քաջուած հանրային գործերէ, կը սիրեն անձնատուր ըլլալ միայն թուղթին ու գրիչին, Թումանեանը ամէն առթիւ կը նետուէր հասարակական կեանքի եռ ու զեռի մէջ և մինչեւ անգամ յաճախ ինքն էր հանրային գործերով պարապելու համար առիթներ ստեղծողը, գիտնալով հանդերձ թէ այդ գործերը կը վնասեն իր գրական աշխատանքներուն, բայց հանրային գործիչի ջիղը իր մէջ շատ աւելի զօրեղ էր քան գրողի աւիւնը:

Այսպէս հայ ազատագրական շարժումները 90ական թուականներէն կը սկսին ծաւալիլ նաեւ Կովկասի մէջ: Թումանեան անոնց մէջն է:

Եկեղեցական կալուածներու բռնագրքաւման և հայ-թաթարական կռիւներու ժամանակ, զինքը կը տեսնենք խիստ գործօն գերի վրայ:

1912ին Թիֆլիսի մէջ կը կազմուի Ազգային Բիւրօ թրքահայ ժողովուրդի քաղաքական պահանջները պաշտպանելու համար: Թումանեանը անգամ է Ազգային Բիւրոյի:

Համաշխարհային պատերազմի սկիզբին հայ կամաւորական շարժումները ծայր կուտան. Թումանեանը անոնց մէջն է, յորդորողի և խրախուսողի դերով:

1915ին, ռուսական զօրքերուն նահանջի հետեւանքով, Վասպուրականի և Տուրուքերանի աղէտահար ժողովուրդը կը թափուի Արարատեան դաշտը: Թումանեան իբրեւ առաջիններէն մէկը՝ կը նետուի քօլերայով ու բժաւոր տենդով վարակուած այդ գաղթական բազմութիւններուն մէջ՝ անոնց ցաւերը ամօքելու համար:

Զինադադարէն յետոյ, Թիֆլիսի մէջ կը կազմուի հայկական նոր բիւրօ մը, որոշելու համար թէ ինչ վնասներ է կրած Անգրկովկասի հայութիւնը թրքական արշաւանքներէն. և Թումանեանը կը տեսնենք այդ բիւրոյի նախագահի պաշտօնին վրայ:

Հայ-Վրացական պատերազմի ժամանակ, Թումանեանը ոգի ի բռին կ'աշխատէր օր առաջ վերջ տալ ընդհարումներուն:

Թրքական երկրորդ արշաւանքի ժամանակ (1920), Հայաստանի բանակը զօրացնելու համար, Վրաստանի մէջ կամաւորներ հաւաքելու առնչութեամբ, Թումանեան խանդոտ աշխատանք տարաւ:

Փետրուարեան խռովութեանց ժամանակ, ան շտապեց Հայաստան՝ կիրքերը հանդարտեցնելու և խաղաղութիւնը վերահաստատելու համար:

Սորհրդային իշխանութեան ժամանակ, երբ անհրաժեշտ էր արտասահմանի գրական օգնութիւնը սովահար հայրենիքին, Թումանեան՝ հակառակ իր հիւանդագին վիճակին, ստանձնեց Հայաստանի Օգնութեան Կամիտէի (ՀՕԿ) նախագահութիւնը և համապատասխան առաքելութեամբ արտասահման ժամանեց:

Յիշատակի արժանի են նաեւ իր թափած ջանքերը՝ Հայ Գրողներու ընկերութիւնը կեանքի կոչելու և պահպանելու կապակցութեամբ:

Մասնաւորապէս իր վերաբերմունքը գէպի հարեւան ժողովուրդները շատ բարեացակամ էր և յաճախ կ'ըսէր. —

— «Տուտուց վրացի կամ տգէտ թաթար կ'ըսենք կ'անցնինք, չմտածելով որ, առանց վրացիի և թաթարի բարեկամութեան ու գործակցութեան՝ մենք ո՛չ հան-

գիտտ կրնանք ունենալ և ո՛չ ալ բարգաւաճում»:

Վրացի գրողներու և մտաւորականներու հետ ան լաւագոյն յարաբերութիւններ կը մշակէր և կը ջանար որ այդ լաւ յարաբերութիւնները երկուստեկ ընդհանրանան: Հայ-վրացական վէճի գլխաւոր պատճառը ան կը վերագրէր փոխադարձ անհասկացողութեան և ասոր մեղքը՝ երկու կողմի մտաւորականներուն:

Թումանեան, որպէս կուսակցական գաշնակցական եղած էր պահ մը, բայց գաշնակցութեան ընկերվարական հակումները և ձարիզմի տապալումը փութացնելու ուղղութեամբ անոր տարած աշխատանքը վտանգաւոր կը գտնէր: Իր հա-

մողումն էր կովկասի մէջ ուսական իշխանութիւնը ամուր պահել:

— «Ի՞նչ գիտէք որ վաղը էլի էդ իշխանութեան փէշից չպէտք է բռնենք, մեր ժողովուրդը թաթարական յարձակումներու դէմ պաշտպանելու համար» կը բացագանչէր...:

Թումանեանի այս ու ասոր նման էլոյթները բաւական եղան որ, ան հեռացուի ուրիշ ընկերներու հետ կուսակցութեան շարքերէն:

Վերջապէս Թումանեան ՀՕԿ-ի առաքելութիւնը արտասահմանի մէջ վերջացրնելէ յետոյ վերագարձաւ հայրենիք և լծուեցաւ վերակառուցման աշխատանքին:

Մ Ե Ր Պ Ա Տ Մ Ի Չ Ն Ե Ր Ը Ե Ի

Մ Ե Ր Գ Ո Ի Ս Ա Ն Ն Ե Ր Ը

1

Մեր հոյակապ հին վաների մութ խուցերում, մեկուքեան մեջ,
Պասնիկները մեր վշահար, մեղմ կանթեղի շոյտով անշեջ,
Մի նշխարով, մի կուռ ջրով եւ անուքեանքի զիշերն անխուս,
Պասնուքիւնը մեր գրեցին մագաղաթի վրայ սեղոյն,

Եղևները, նախնիները հորդաների արիւնը ունչ,
Փրշուզումը հայրենիքի եւ ոսոխի սուրը անկուշ:
Եւ ողբացին շարահատաչ դրժխեմ բախտը Հայաստանի
Եւ յուսացին արդարութեան մի խուչ Աստուծոյ դասասանի:

2

Մեր գեղջուկի պարզ խրճիթում, սուրբ օճախի շուրջը նրսած՝
Գուսանները մեր խանդաղից, աջեւները գիկի եւ հաց,
Վխպերգեցին յաղթանակը դիւցազներին մեր մեծագոր,

Եւ ծաղեցին պարտութիւնը ոսոխներին մեր բիւրաւոր,
Եւ հիւսեցին պասմութիւնը յաւերժացող ժողովուրդի,
Վասն հասարակ փառերը մեր ասանդեցին որոյց որդի,

Տեսան շրթեղ մեր սպագան, անընկճելի ազատ ոգին,
Հայրենիքի սիրոյ հաւար միշտ բարձրացած Թուր Կայծակից:

Ա. Ի. ՍԱՀԱԿԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ ԹՈՒՐԻՍՒԱ.— Պոլոյ մէջ, Ապրիլ 18-ին տօնուած է արեւելեան երաժշտութեան վարպետներէն Հրանդ Քենքիւլեանի (ծանօթ՝ Ուտի Հրանդ անունով) յիսնամեայ յոբելեանը: Այդ առթիւ Թուրքիոյ նուագածուներու ընկերակցութեան նախագահը ոսկեգօծ դափնեպսակ մը զետեղած է վաստակաւոր արուեստագէտի ճակատին:

ԱՄՄԱՆ ՅՈՐԴՒՆԱՆ.— Հոկտեմբեր 27-ին, Կիրակի օրը տեղի ունեցաւ Ամմանի նորակերտ Աբ. Թագէտս եկեղեցիին օծումը: Երուսաղէմի Ամենապատիւ Աբ. պատրիարք Հայրը իր հետեւորդներով Հոկտեմբեր 25-ին Ամման ժամանեց և ընդունուեցաւ հայկական կազմակերպութեանց կողմէ: Զինքը դիմաւորներուն միացած էին նաև եկեղեցւոյ բարերարները Տէր և Տիկ. Յարութիւն Թագէտսեանները, որոնք օր մը առաջ Ամման ժամանած էին գալով Հայաստանէն:

Շաբաթ 25-ին պատրիարք Սրբազանը կատարեց դոնըացէքի արարողութիւնը, որուն յաջորդեցին երեկոյեան ժամերգութիւնը, օծման նախատօնակը և գիշերային հսկումը: Կիրակի առաւօտ կատարուեցաւ եկեղեցւոյ օծումը, յետոյ տեղի ունեցաւ անդաստան: Պատարագեց Շահէ Սրբազան, իսկ Պատրիարք Սրբազանը պերճիմաստ քարոզով մը ներբողեց եկեղեցւոյ բարերարներուն աջիւ գործը որոնց ծնողացն ու վազամեռիկ ազջկան ի յիշատակ, կատարուեցաւ հոգեհանգիստ: Ապա Աբ. պատրիարք Հայրը «Էլ Ուրտոն» հիւրանոցին մէջ ճակերոյթ մը տուաւ, որուն ներկայ գտնուեցան վարչապետը, նախարարներ, եկեղեցական և ազգային գէմքեր, ինչպէս նաև Թագէտսեան ամուրը:

Յաջորդ օրը, Աբ. Պատրիարք Հայրը վեհափառ Հիւսէին թագաւորին ներկայանալով, յանուն իր հօտին չնորհակալութիւն յայտնեց ամէն առթիւ հայ գաղութին հանգէպ ցոյց տրուած հոգածութեան համար:

ՀԱԼԷՊ - ՍՈՒՐԻԱ.— Ոգեկոչելու համար մեր մէկուկէս միլիոն նահատակնե-

րուն անմեռ յիշատակը, Ապրիլեան եղեռնի 53-րդ տարեդարձին առթիւ Հ. Բ. Ը. Միութեան Սուրբոյ շրջանային Յանձնաժողովի յարգարժան Ատենապետ և հանրածանօթ ակնաբոյժ Տոքթ. Ռոպէր ձէպէճեան շահեկան դասախօսութիւն մը տուաւ, նրաւիբուած Անի քաղաքի պատմութեան, քաղաքաշինութեան, ամբուծիւններու և յուշարձաններու: Գասախօսութիւնը տեղի ունեցաւ Հինգշաբթի՝ 25 Ապրիլի երեկոյեան, Միութեան հանդիսասրահին մէջ, ուր 800է աւելի այգայիններ փութացած էին ունկընդերլու այս հետաքրքրական դասախօսութիւնը:

Յարգելի գասախօսը մէկ ժամէն աւելի գունաւոր լուսապատկերներով ներկայացուց Անի քաղաքի շինութեան յատակագրերը, և ճարտարապետական կառոյցները: Յետոյ արաքին թշնամիներուն դէմ մղուած կռիւնները, եղած աւերներն ու փայլուն շրջանները: Յարգելի բժիշկը անդրադարձաւ նաև Անիի եկեղեցական ճարտարապետութեան կոթոյններու մասին, ինչպէս Մայր Տաճարի, Ապուղամեանց, Տիգրան Հոնենցի, Կուսանաց վանքի, Հովուի և այլ եկեղեցական շէնքերու կառոյցներու և անոնց պատմական արժէքներու մասին:

Գասախօսութենէն վերջեմ հրաւիրուեցաւ Հայաստանի ճարտարապետներու Միութեան նախագահ Տոքթ. Փրոֆ. Վարազդատ Յարութիւնեանը, որ Ապրիլեան եղեռնի առթիւ իր պատգամը տուաւ:

ՊԷՅՐՈՒԹ

ԶՄՄԱՌԻ ՀԱՅ ՎԱՆՔԻՆ ՄԷՋ.— Նոյեմբեր 3ին Աշրաֆիէի Հ. Կ. Աղքատախընամ մարմինը, վարչականները և բարերար անդամները այցելեցին Զմմառի պատմական հայ վանքը:

Եկեղեցական պաշտամունքին ներկայ գտնուելէ վերջ, այցելուները մտան թանգարան և զոհունակութեամբ դիտեցին նորայարգար զանձերը՝ հնամենի ձեռագիրներ, գրամներ, նկարներ և եկեղեցական հանդերձանք: Ապա ուղղուեցան Անարատ Յզութեան Հայ Բոյրելու ազջկանց որբա-

նոցը, պատեցան զանազան յարկաբաժինները, դասարաններ, ճաշարան, և ննջանհետակ: Միջօրէին բոլորը սեղանի մը շուրջը բոլորուեցան: Ագապի (աղքատաց ճաշ) ընթացքին Գեր. Վարդան վրդ. խօսք անհեղձ յայտնեց թէ Հ. Կ. Աղքատախնամը երեք տարի առաջ սկսաւ գործել և մըխիթարական գործունէութիւն մը կը յայտնաբերէ: Մեր համեստ աշխատանքով օգնեցինք անօթի աղքատին, չքաւոր աշակերտին, կալզուրման կայաններ ղրկեցինք չքաւոր ընտանիքներու փոքրիկները, այցելեցինք կարօտեալներու տուները, քաջալերեցինք ու միխիթարեցինք: Խօսեցան նաեւ պպ. Ռոպեր Պօլոսեան և Հրաչ Քաջարենց:

ՅԲԱՆՍԱ ՓԱՐԻԶ. — Հայրենի անւանի բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեան Ապրիլի ընթացքին այցելեց Ֆրանսա, ուր մնաց շուրջ ամիս մը և որու ընթացքին ան չըջատոյտներ կատարեց տեղւոյն հայաշատ քաղաքները և ամենուրէք արժանացաւ խանդավառ ընդունելութեան:

Այս պատեհութեամբ Տիկ. Կապուտիկեան այցելեց Հ. Բ. Ը. Միութեան գրասենեակին ու Նուպրեան մատենադարանը, և պատուանշրուեցաւ պատշաճ կերպով: Հայրենի քերթողունին բարձրօրէն գնահատեց Միութեան կատարած ազգօգուտ գործունէութիւնը: Տիկինը այցելեց նաեւ Մարի Նուպր ուսանողական ստանը:

Ապրիլ 26-ի երեկոյեան իրեն ի պատիւ սարքուած ողջերթի հանգիստութեան ընթացքին, Օթէլ Լիւթեսիայի մէջ, ուր ներկայ էր հոծ բազմութիւն մը, Սիլվա Կապուտիկեան իր խօսքին մէջ քանի մը հատուածներ կարդաց նախագահ Ալեք Մանուկեանի մէկ միլիոն տոլարի հիմնադրամին աննախընթաց լուրը հաղորդող Հ. Բ. Ը. Միութեան զեկոյցէն որ, ըսաւ, մեծ ութախութիւն կը պատճառէ իրեն և թէ կը յուսայ ուրիշներ եւս կը հետեւին պր. Ա. Մանուկեանի գեղեցիկ օրինակին:

Հ Ե Ր Ո Ս Ի Ն Մ Ա Շ Ը

ՄԻՍԱՔ ԹՈՐԼԱՔԵԱՆ

(1893 — 1968)

Հեռաւոր Քալիֆորնիայէն գուժեցին մահը հերոսին, որ սրտի տագնապի մը զոհը եղաւ: Ժամանակէ մը ի վեր ան կը խնամուէր հիւանդանոցին մէջ և այս տարի ազգիս Վեհափառ Հայրապետը Ամերիկա կատարած իր շրջապտոյտի ընթացքին հանդիպեցաւ հերոսին, աղօթեց, միխիթարեց, սրտագնդեց զինքը և Մայր Հայրենիք հրաւիրեց: Աւա՛ղ. հերոսը չկրցաւ Վեհափառին հրաւերին պատասխանել և սփոփել ի տես իր յաղթական վերելքին մէջ, վերածնուող Մայր Հայրենիքը:

Հերոսը տրապիզոնցի էր, այսինքն այն քաղաքէն որուն հայութիւնը նահատակուեցաւ ամենամագնիս կերպով Պէհակէ Տին Շաքիր կոչուած Իթիհատական բորենիի մը զեկավարութեամբ: Ահա թէ ինչո՞ւ խաղաղասէր, բարի և աղնիւ հօգի մը ունեցող Թորլաքեան, դարձաւ հայդուկ, դարձաւ վրէժխնդիր բազուկ և իր հարիւր հազարաւոր ազգակիցներուն բնաջնջումին պատասխանատուները անբեկելու պարտականութեան զինուորագրուեցաւ:

Մեծ եղեռնադործին Թալէաթի անբեկումէն յետոյ (15 Մարտ 1921), այս անգամ Պոլսոյ ամենահոծ թաղամասերէն Բերայի շրջանին մէջ տեղի կ'ունենար երկրորդ անաբեկումը Պէհակութ Սան Զիվանչիլի, որ Բագուի 30.000 հայութեան բնաջնջումին պատասխանատուն էր և որ Պուլիս ապաստանած, կը պատրաստուէր Եւրոպա մեկնել, երբ յանկարծ վրիժառու հայուն Միսաք Թորլաքեանի գնդակը զինքը զգեանց 1921 Յուլիս 18ի գիշերը, իր փախուստի ճամբուն վրայ:

Եւ այսպէս կորաւ Բագուի կոտորածներու տխրահռչակ բորենին. Պէհակութ Սան Զիվանչիլը:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

1918 թուականի Մայիսի 15ին թուրքերը խախտելով զինարարարը՝ մեկ օրուայ ընթացքում գրաւում են երկարուղային կարեւոր հանգոյց Ալեքսանդրաքոյ բերդափայտը: Թիֆլիսից կտրուած եւ մեկուսացուած Երեւանը սագնասպաչի օրեր է ապրում: Մայիս 19ին Երեւանի Հայոց Ազգային Խորհուրդը Թոշեանի առաջարկով կ'ընդունի Երեւանը սուսեց կոռի թուրքերու ողորմածութեանը յանձնելու որոշումը, եւ այս որոշումը Երեւանի Բաղափայլին Խորհուրդի թուրք անդամները, յատուկ սուրհանդակով, անմիջապէս Թալիսի վրայով կը դրկեն Ալեքսանդրաքոյ Շէլիֆի փաշային:

Ալեքսանդրաքոյի անկումից եւ Երեւանի Բաղափայլին Իռւնայի այդ որոշումից յետոյ, Երեւանեան զօրաբանակի հրահանատարութիւնը մնում էր հապճեպօրէն դատարկել Սուրմալուն, սպա՝ Արարատեան դաշտը եւ ունեցած սակաւաթիւ զօրքը բարձրացնել Կոստայ-Սեւան սաւանդան:

Սուրմալունի ձախսի հրահանատար գեղապետ Դանիէլ Բեկ Փիրումեանը Մայիս 20ին հագիւ աւարտած էր պարպումի գործողութիւնը եւ Երեւանեան ղօրաբանակի զօրահաստերի մեծ մասը դեռեւս զտնուում էր երկարորդագծից հարաւ, երբ թուրքերը, Շէլիֆի փաշայի հրահանատարութեանը, Մայիս 21ին գրաւում են Սարսարապատ գիւղն ու կայարանը, իսկ 22ին հասնում մինչեւ Դանուշու (այժմ Եղիզկէտ) կայարանը՝ շտապելով մտնել թրփաքանակ Զանգիբասարը:

Այսպիսով՝ նահանջի ձանապարհները փակուել էին Դանիէլ Բեկի սուաջ: Նրա ընկիր զօրին եւ տասնեակ հազարաւոր հայ զինուորացիութեան սպանումը էր Երեւանից կտրուելու վտանգը: Նահանջի ձանապարհը բաց անելու հետեւ քայլ գեղապետը Դանիէլ Բեկ հակահարձակումս հրահան էր արար: Կանոնաւոր զօրքի հակայարձակումը պատկուում էր փայլուն յաջողութեանը: Թուրքերը մեծ կորուստներ տար իսկապէս իսկապէս Ալեքսանդրաքոյի մասոյցները: Հայ զօրքը գեղապետ Փիրումեանի հրահանատարութեանը, ջիւղափայլից հարուած հասցնելով թուրքերին, սպանուելում եւ հայ ժո-

ղովրդի գոյատեւութիւնն իր վաղեմի թիւրքանի մի մասում:

Ալեքսանդրաքոյի անկումից յետոյ, Արարատեան դաշտն են նահաջում Ախուրեանի բրնազձում կանգնած հայկական զօրահաստերը, թիւով 700-800 սուլին: Երեւանեան զօրաբանակի հրահանատարութիւնը այդ զօրահաստերը տեղաւորում էր Կոշ եւ Խզնաուշ գիւղերում եւ յանձնում էրիսասարդ գեղապետ Կարօ Դասարբաշեանին, իսկ հրահանատարներէն մեկը Ալեքսանդր Շենուրին ուղարկում էր վերագրաւուած Սարսարապատ՝ գեղապետ Փիրումեանի տրամադրութեան տակ: Կոշը շարունակում էր հայ զօրքի համար արդէն յաջող դարձած ընթացքով: Գեղապետ Փիրումեանը ուսուսակումս բանակի գերագոյն շտաբի կապիտան Ալեքսանդր Շենուրին (osor) անմիջապէս նշանակում էր գործող բանակի շտաբի պետ: Ահա ինչ էր գրում նա (կապիտան Ալեքսանդր Շենուրին) Սարսարապատ վերջին վճռական կոռի մասին, որ տեղի էր ունեցել 1918 թուականի Մայիսի 26ին, Սարսարապատ կայարանից դեպի Արաբսու կայարանը տանող սուսարներում.— «Հայ զօրքն ու աշխարհագրաբանները թուրքերին դուրս են իջնել Արարատեան դաշտից, սակապէս մեծ կորուստներ տար իսկապէս իսկապէս արեւմտեան ընկած Թուրքի-քապուս եւ մանաւանդ Չիլի-Ղըր բարձունքներին: Հարկաւոր էր թշուառն ու դուրս իջնել նաեւ այդ երկու անրացուած բարձունքներից: Գործ են դրում բոլոր ուժերը. գեղապետ Դասարբաշեանը (Հասան Փաշաեանը) իրար միացնելով կապիտաններ Մանիէլի (Մանեան) Շենուրի եւ իր զօրահաստերը, Կոշ եւ Խզնաուշ գիւղերից դուրս էր գալիս շրջանց մանեալով զարկելու Չիլի-Ղըր բարձունքին: Պակուիսը հաւաքելով իր կտրիճ մշեցիներին, Թալիսից 200 ձիաւորով գրոհում էր այդ նոյն բարձունքի վրայ: Չիլիսի հրահանատար Դանիէլ Բեկի հրահանով Սարսարապատ գիւղից ու կայարանից երկու բարձունքների վրայ են շարժում զընդապետներ Պերկրոյանովսի պարտիզանական եւ Պաւել Փիրումեանի մահապարտների գեղերը: Զինան աշտարակի բարձունքից Դանիէլ Բեկ Փի-

րուեանը ինչ-որ երեւում է նկատու իր հրա-
մանով անկասայիև գրոհի դուրս եկած գորա-
ւաստի շարժումը: Դեպի Բոյունի բանալի աւ-
րոց Դալան գիւղը գրաւած է հերոսութեանը
պանկանած վճռական հրահանւարը չի հաւ-
թում: Ես ցած է իջնում քիւսն աշտարակից,
հանում է իր գեներալական կարմիր սասանով
շիկեղը (բաճկոն), շուր է սալիս այն էւ շուռ
տուած հագնելով, անցնում է իր գորաւարտի
չորայի առաջ էւ, սոյոգ մահն արհանարհելով,
վճռական ու աներեւ գրոհի է խանդավառում
իր զօրերին:

Զօր. Փիրուեանը իր կարմիր սասանով
գիւնուորական վերարկուիւն մեջ, փայլում էր էս
ու առաջ էւ վերջապէս ճիւղիւրելով, մեկնեց
դէպի կուղոյ շրքան: Մեկնելիս նա ինձ յանձ-
նեց կոռնի դէկալարուքիւնը ստելով:

— Կապիտան, Դուք արդէն անեւ ինչ գի-
տեք, դէկալարե՛ք կոռնը ինչո՞ւ որ մեկ քոռ-
չած եմք:

Ես բարձրացայ քրնուղի վրայ, որտեղից ա-
մեւ ինչ երեւում էր, ստես ախի մեջ . .
Մեր գորաւաստը հագար փայ հեռաւորութեան
վրայ քուրժեղից. դանդաղ առաջ էին շարժում
էւ արդէն մոտենում էին քշեանուն չորս հա-
րիւր փայի վրայ: Առջեւից իր վերարկուի կար-
միր սասանը դէպի դուրս հագած, փայլում էր
գորալար Փիրուեանը, ապա, նրա հրահանի
վրայ, շրքաները պարկեցին. . . : Ես իմ հաւ-
հարգների միջոցով յղեցի նախօրօ պատրաստած
հրահանը՝ յարձակուէլ: Զօր. Փիրուեանը ինքն
սացաւ իր հրահանը. . . շրքաները ոտքի ելան
էւ «ոռոտ» կանկելով յստաջ վագեցին:

Հայրական Առանձին գորաքաժնի հրահա-
նւարն էր գորալար Լազարեկովը, փայ, ազ-
նիւ էւ անեկից սիրուած: Ծագումով նա հայ
էր, սակայն իրեն ոռու էր հաւարում էւ հա-
յերէն չէր խօսում: Իսկ դէկալար Փիրուեանի
մասին, գեղապէս Ենեուրը չի վարսնում ա-
ւել, որ այդ ընդհանուր փորձանն յուսահաս-
կան օրերուն գօր. Փիրուեանը յարեւարագոյն
գիւնուորականն էր, որին վիճակուած էր վարել
Սարսարապասի այնքան վճռական ու բախտ-
ոռոյ կոռները:

Սարսարապասը վերջնախաղն էր: Զօրա-
լար Դանիէլ քեկ Փիրուեանն այդ վճռական
պահին հարեւար էւ արժանի՝ անվեհեր գիւնուրա-
կանն էր:

Սարսարապասի հերոսաւարտի օրերին, Դա-
նիէլ քեկի հետ գործակցած յայտնի գիւնական
Դարեգին արքաւան Յոյսեպեանի յուշերուն մեջ
կը կարդանք:

— «Գեներալ Դանիէլ քեկ Փիրուեանի
մեկն ոչ միայն ծանօթ էիմք, այլէ բարեկամ:
Ես Դարաքաղցի էր կամ հին Հայաստանի Ար-
ցախ նահանգից, Վարանդա գաւառակի Դուխի-
ջեւանիկ գիւղից, Եռշի փաղափոց ոչ հեռու:
Մեկն էր նա Փիրուեանների անուական ըն-
տանիքի գաւալներից, որունց յատուկ էր գիւնուրա-
կան ծառայութեան մեջ մեկնելը: Գեներալի սա-
տիճանն ունէր նրա եղբայրը կամ գարմիլը՝ Պա-
վել Փիրուեանը, մի այլ սզգական էր... Զին-
ւորական ծառայութեան մեջ էին նրա երկու
որդիւ՛ր:

Տաճիկների հետ մեր առաջին պատերազմի
ժամանակ, 1918ին, նրան ծանօթացել էիմք Բզ-
ժիի անկասաւարտուն, քայց մտերմացել Սար-
սարապասուն: Երա հոջակը բարձրացել էր յա-
կապէս այդտեղ տարած յաղթութեանը, իսկ մեկն
ձստերով էւ խրախուսանքներով ոգեւորել էիմք
զօրքին, խրախուսել անկասուն էւ խրահանե-
րուն, էւ հաւարուիլ իրեւ նպաստոյ յաղթու-
թեան, արժանակալով փայութեան Գեորգի Ենի
շխնչանին, որի ժապաւեկը կրում էիմք զօրքի
մեջ երեւակալու:

Ժպեղով նա մեզ «Ղեւոնդ Երեց» էր ան-
ւանում, իսկ մեկն նրան՝ «Վարդան Սարսարապէս»:

Սարսարապասի յաղթութեան հետեւանմով
Աւայ գորալարի սատիճան էր ստացել էւ գի-
նալարարից յետոյ՝ Կարաք մեր ձեռքն անցնելով,
նշանակուած քերդապահ:

Վերջապէս Սարսարապասի հոյակապ ու
բախտոռոյ անկասաւարտը դէկալարել է ձստու-
կան բանակի խասալարժութեան մեջ, սզգային
դեկը չկորցրած, տեսական հետքեանը գիւն-
ւած էւ անձնագրեւութեանը օժտուած վճռական
ու փայ գեղապէս, Դալան-Գիւղի աներութեան
հերոս Դանիէլ Բեկ Արխողղանի Փիրուեանը,
որ մեր պատերազման անեւանվճռական ժաւին,
երբ քրքական ետքալանը կախուել էր հայ ժո-
ղովրդի գլխին, կարողացաւ հետքեւ դէկալար-
ել նրա ինքնապաշտպանողական արդար կոռնը
էւ վստղուն յաղթանակով սպանողել մեր հիւն-
ւորց ժողովրդի գոյսեւութիւնը իր բնօրու-
նում:

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ 4րդ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽՈՐԵԱԿԻՆ

Համագումարի նիստերուն բացման նախօրեակին, «Օթէլլ Ռից»ի շքեղ սրահներուն մէջ տեղի ունեցաւ փայլուն ընդունելութիւն մը, կազմակերպութեամբ Հ. Բ. Ը. Միութեան Բարիկի երիտասարդաց ակումբին: Այս ընդունելութիւնը առաւելաբար յատկացուած էր Լիրանանէն, Սուրիայէն, Եթովպիայէն, Յունաստանէն, Իտալիայէն, Զուլիցերիայէն, Ֆրանսայի և Ամերիկայի գանազան շրջաններէն, Հարավային Ամերիկայէն և Աւստրալիայէն եկած պատգամաւորներու ծանօթացման: Ընդունելութեան ներկայ էին Գերշ. Սեբովբէ Սրբազան, պպ. Ուիլլիամ Սարոնան, Վարդգէս Համագասպեան և այլ անձնաւորութիւններ:

Գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր մը, որուն մասնակցեցան Տիկ. Աստղիկ Տէտէեան (երգ), Օր. Ն. Աժտերեան, (ղաշնակ), պ. Ժ. Թորգոմեան (Չութակ) և «Սօսի» պարախումբը, որուն կատարումները ջերմապէս գնահատուեցան ներկաներուն կողմէ:

7 Մայիս 1969^{*,*} առաւօտեան ժամը 10ին Բարիկի «Լը Կրան Օթէլլ»ի սալոն Լուի ԺԶ. շքեղ սրահին մէջ բացուեցաւ Հ. Բ. Ը. Միութեան համաշխարհային 4րդ համագումարը նախագահութեամբ Միութեան բարեջան նախագահ Տիար. Ալեք Մանուկեանի, և ի ներկայութեան Աւստրալիայէն Պրազիլէն, Հիւսիս. Ամերիկայէն, Ափրիկէն, Միջին Արեւելքէն և Եւրոպայէն եկած պատգամաւորներու: Հայաստանէն մասնաւորապէս հրաւիրուած էր Մշակութային Կապի Կոմիտէի նախագահ պ. Վարդգէս Համագասպեան: Ներկայ էին նաեւ բազմաթիւ հիւրեր և թղթակիցներ:

Տ. Ա. Մանուկեան իր խօսքին մէջ ընդգծեց Հայրենիքի և Սփիւռքի միջեւ կապերուն ամրապնդման անհրաժեշտութիւնը հայապահպանման համար, և ըսաւ թէ այս համագումարը կը հանդիսանայ շինա-

րար աշխատանքի նոր ուղիի մը սկիզբը:

Պ. Համագասպեան խօսք առնելով թուեց այն աշխատանքները զորս Հ. Բ. Ը. Միութիւնը կատարած է ու կը կատարէ ի նպաստ Մայր Հայրենիքին, ինչպէս ներգաղթի մէկուկէս միլիոն տղարի հանգանակութիւնը: Ապա ներկայացուց Հայաստանի նուաճումները մշակութային բոլոր մարզերուն մէջ, ինչպէս և այն բարիքները և օժանդակութիւնը զոր Հայաստանի կառավարութիւնը կ'ընծայէ Սփիւռքին: Հայրենի պետութիւնը, ըսաւ պ. Համագասպեան, լուրջ ուշադրութեան առած է հայապահպանման գործը: Այս մարզին մէջ Հ. Բ. Ը. Մ. ը կարեւոր դեր մը ունի կատարելիք, և այս տեսակէտով ան պիտի դառնայ Հայաստանի կարեւոր մրցակիցներէն մէկը Սփիւռքի մէջ:

Երեք հայ հոգեւոր պետերը Սեբովբէ Արք. Մանուկեան, Գերագայծառ Ամատունի և Վեր. Գարեգին Սիւլեան, յաջորդաբար խօսք առնելով, ընդգծեցին այն իրողութիւնը թէ, եկեղեցին միշտ քաջալիր և նեցուկ հանգիստացած է Հ. Բ. Ը. Միութեան, և հաստատեցին թէ հայապահպանման մարզին մէջ կենսականօրէն կարեւոր են հայ մշակոյթի ծաղկումն ու հայ լեզուին տարածումը:

Համագումարին պաշտօնական քարտուղար ընտրուեցաւ Ատիս Ապէպէն պ. Հայկաշէն Ուզունեան:

Յաջորդաբար խօսք առին Տիկ. Աստղիկ Շիշմանեան, որ ներկայացուց Թեհրանի շրջանին կարիքներն ու սկիզբաւորութիւնները, ինչպէս նաեւ հետեւեալ պատգամաւորները. —

- Պ. Շարլ Փիլիպոսեան. Ժընևեի մասնաճիւղի ատենապետ.
- Փրոֆ. Բարունակ Թովմասեան. (Պէյրուս)
- Տոքթ. Ֆիլիպ Մելքոն Տէյտէրեան (Պրազիլ)
- Վեր. Յարութիւն Հելվաճեան (Մարսէյ)
- Հոգեւ. Միսրոպ վրդ Գրիգորեան (Վիեննա)
- Պ. Նշան Առաքելեան (Աւստրալիա)
- Պ. Ալեքս Հաննեան (Բալիֆորնիա)

ՏԻՆԱՄԻԹԸ ԵՒ ՆՈՊԵԼԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԸ

Շուէտի մայրաքաղաք Սթոկհոլմի արուարձան Հելենբորհենը, 1864-ի Սեպտեմբեր 3-ին, կէսօրին հաւաոր պայթիւնով մը ցնցուեցաւ և պայթիւնին վայրը գտնուած շուէտացի ճարտարագէտ Ալֆրէտ Նոպէլի պատկանող նիդրօ-կլիսէրինի գործատունը հիմնովին քանդուեցաւ:

Հոն ուր կը գտնուէր գործատան շէնքը, հսկայական փոս մը բացուեցաւ որ գանդադօրէն ջուրով կը լեցուէր:

Գործատան փլատակներուն տակէն հանուեցան զիւտարար Ալֆրէտ Նոպէլի կրտսեր եղբօր, ինչպէս և անոր ամենամտերիմ բարեկամին՝ քիմիագէտ Հերլմանի գիակները:

Թէեւ տինամիթի պատրաստութեան գործը կանգ չառաւ, այլ ընդհակառակը տա անուեցաւ ու ծաւալեցաւ, բայց և այնպէս ազէտը շատ ազդած էր Նոպէլի վըրայ որ կը շարունակէր իր գիտական հետազօտութիւնները կոտրած և ընկճուած սրտով: Նոպէլ կը հաւատար որ իր յայտնագործումը (տինամիթի գիւտը) մեծապէս պիտի սատարէ զանազան աշխատութեանց և շինարարութեանց: Ան իր գիւտի մասին գրած յօդուածներու մէջ միշտ կը պնդէր տինամիթը պիտի նպաստէ աշխարհի խաղաղութեան ամրապնդումին, և անգամ մը որ պատերազմիկ բանակները համոզուին թէ պայթուցիկ նիւթերը կրնան քանի մը բոպէի միջոցին զիրար ոչնչացնել, այդ պահուն արդէն զէնքերը յաւիտեան պիտի լռեն և պատերազմները դադրին:

Պատմութիւնը սակայն այլ ընթացք ունեցաւ:

1870-ին սկսաւ ֆրանքօ-բրուսիական պատերազմը, պայթուցիկ նիւթերով լեցւած ուժերը, ռազմաբեմին երկու կողմերն ալ հաւասար ուժգնութեամբ կը հարուածէին, որով տինամիթը դարձաւ մարդիկը ոչնչացնող, գանդուածային մահ սփռող նիւթ մը:

Նոպէլ հետզհետէ կը զգար իր պատասխանատուութիւնը հանդէպ մարդկութեան: Զանալով իր ակամայ գործած չարիքը գէթ մասամբ դարմանել, սկսաւ նիւթական օժանդակութիւններ ընծայել խաղաղասիրական կազմակերպութեանց և համանման համագումարներու: Վերջապէս 1895-ին, Փարիզի մէջ ան գրեց իր կտակը, որուն համաձայն իր հսկայական հարստութեան մեծագոյն մասը կը յատկացնէր, իր անունով տարուէ տարի տըրւելիք մրցանակներու:

Կտակագրին մէջ հետեւեալ կերպով մանրամասնուած են այդ մրցանակներուն արժանի նկատուելիքներու պարագաները.

ԱՌԱՋԻՆ. Բնագիտութեան մէջ ամենամեծ յայտնագործութեան կամ զիւտարարութեան հեղինակին.

ԵՐԿՐՈՐԴ. — Ֆիզիոլոժիի (կենսաբանութիւն) կամ բժշկութեան մէջ ամենամեծ կամ ամենակարեւոր յայտնագործումը կատարողին.

ԵՐՐՈՐԴ. — Քիմիարանութեան մէջ ամենակարեւոր յայտնագործումի կամ կատարելագործման մը հեղինակին.

ՉՈՐՐՈՐԴ. — Իր ժամանակի «Իտէալական գաղափարը» առաւել վառ շունչով մարմնաւորող գրական ստեղծագործման մը հեղինակին.

ՀԻՆԳԵՐՈՐԴ. — Խաղաղասիրական այն կազմակերպութեան և կամ խաղաղասէր այն անձին՝ որ իր առաւելագոյն ուժերն է հանդէս բերած խաղաղութեան համագումարներ և քօնկրէսներ կազմակերպելու համար:

Նոպէլի մահէն տարի մը յետոյ, 1900 թուականի Ապրիլին այս կտակը հաստատուեցաւ թագաւորական յատուկ հրովարտակով:

Աւելի քան վաթսուն տարիներու ընթացքին շատ մը աւանդութիւններ ընդուն-

ւած են Նոպէլեան մրցանակներ շնորհելու կապակցութեամբ:

Բնագիտութեան (ֆիզիք) և քիմիայի (քնալուծութեան) մարզերուն վերաբերեալ մրցանակները կը շնորհէ Շուէտի գիտութեանց ակադեմիան:

Գրականութեան մրցանակը կը տրուի: ուէտի թագաւորական ակադեմիին կողմէ:

Կենսաբանութեան և բժշկութեան մարզերու դասնակիրները ընտրելու իրաւունքը վերապահուած է Ստոկհոլմի բժշկութեան և վիրաբուժութեան հիմնարկին:

Պարագոլութեան մրցանակով կը պարգևատրէ հինգ հոգիներ յանձնաժողով մը, որ կ'ընտրուի Նորվեկիական պարլամենտի կողմէ:

Ինչպէ՞ս կ'որոշուին նոր դասնակիրները. մրցանակը շնորհելէ վեց ամիս առաջ շուէտական գիտութիւններու ակադեմիան կը դիմէ ութ հարիւրի մօտ զանազան մասնագէտներու, նախկին Նոպէլեան մրցանակաւորներու և անոնց կարծիքը կը հարցնէ Նոպէլեան մրցանակի նոր դասնակիրի մասին:

Մինչև և՛ արտ մէկ պատասխանները կը հասնին: Վաղաժամ բանավէճերէ խուսափելու համար ստացուած անունները խիստ զաղտնի կը պահուին: Սեպտեմբերին ակադեմիան կը հաւաքուի և յիշեալ ամսուան նախափերջի Հինգշաբթին ընտրութիւնը կը կատարուի:

Նոպէլի կամքին համաձայն շուէտ գիտնականները ընտրութեանց կը մասնակցին առանց վճարումի:

Բայց ըստ սովորութեան, մրցանակը շնորհելէն յետոյ Նոպէլեան մրցանակի իւրաքանչիւր անդամը Ստոքհոլմի պօրսայի կառավարիչէն - ուր ընտրութիւնը կը կատարուի - կը ստանայ մէկ արծաթէ տուար, որով կարելի է ճաշել զիմացի նկուզճաշարանին մէջ:

Կ'ըսեն թէ գիտնականներուն մրցանակներ շնորհելու պարագային, նուազ վէճեր կը պատահին քան գրողներուն:

Գեկտեմբեր 10-ին Ալֆրէտ Նոպէլի մահուան տարեդարձի օրը, ամենահանդիսաւորն է: Թագաւորը դասնակիրներուն

ՍՓԻՒՌՍԱՅ ԿԵԱՆՔ

ՎԵՀԱՓԱՌԸ ԱՐԺԱՆԹԻՆԻ ՄԷՋ

Սրտառուջ կոչով մը Հաճնոյ Հայրենակցական Միութիւնը հրաւիրած էր հայ ժողովուրդը բաժնելու համահայկական օւրասութիւնը որ պարգեւեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Իր Արժանթին կատարած երկրորդ այցով:

Արդարեւ ՅՅ Յունիսի Ռէքրաթ օրը, Նորին Սրբութիւնը բարեհաճեցաւ այցելել «Հաճըն Տօնը», որ գոյնզգոյն լոյսերու մէջ կը շողար և յարգարուած էր ճաշակով և խնամքով: Նոր վարագոյրներ, գորգեր, երփներանգ և բուրումնաւէտ ծաղիկներ, մշտագալար բոյսեր ակահաճոյ տեսարան մը կը պարզէին հաղիսսարանէն ներս: Հիւրամեծար տիկիններու և օրիորդներու խումբեր կազմուած պատրաստ կը սպասէին Վեհափառին, երբ որոշեալ ժամուն, Նորին Սրբութիւնը հարգիս սվայրէն ներս մուտք գործեց յոգնասուան բաժնութեան մը որոտագին ծափերուն մէջ:

Հայ տիկիներու ճարտար մատներովը պատրաստուած համադամներու ալլապան տեսակներովը բեռնաւորուած էին սեղանները, որոնց կեդրոնական բաժինին մէջ զետեղուածին շուրջը բազմեցաւ Վեհափառը, շրջապատուած Իր հետեւորդներով: Սեղանի օրհնութիւնէն յետոյ զօր Վեհափառը կատարեց, սեղանապետ պր. Վահան Գալֆայեանի բացման խօսքով երեկոյթը

կը շնորհէ Պատուոյ տիպլումներ և չէքեր՝ մրցանակը ստանալու համար: Այնուհետեւ Ստոքհոլմի քաղաքային վարչութեան «Ոսկիէ դահլիճ» ին մէջ տեղի կ'ունենայ շրգեղ ընդունելութիւն:

Օրէնքով, պարգևատրուածը Նոպէլեան մրցանակը պէտք է անձամբ ստանայ: Եթէ ան չկրնար ներկայանալ հանդիսաւոր արարողութեան, մրցանակը կը տրուի այն պետութեան գլխահագիտական ներկայացուցիչին, որուն քաղաքացին է մրցանակակիրը:

«ԳԻՏՈՒԹԻՆ ԵՒ ՏԵՆՆԻԿԱՆ?»

սկսաւ ընդհանուր խանդավառութեան մէջ: Յաջորդական կենացներ՝ Վեհափառին աբեւշատութեան, Մայր Աթոռի անասանութեան, լուսաշող Մայր Հայրենիքի յաւերժութեան համար: Արտասանութիւններ և մեներգներ, բեմբասաց պր. Հատիտեանի ոգեւորիչ խօսքերը և վերջապէս մեր առաքելոտիպ Վեհափառը կը խօսի:—

«Յիշելով ութը տարի առաջ մեր առաջին այցը այս շէնքին մէջ համախորժութեամբ հաւատացեալներուն, սիրով մեր քայլերը ուղղեցինք այս հայրաւան տունը բերելու ձեզի հայրաւան օրհնութիւններն ու ողջոյնները Մայր Աթոռին: Ծատ յուզիչ մթնոլորտ մը ստեղծուեցաւ այս գիշեր, այն ոգին որ կը սաւառնի հոս, կ'ուրախ սցնէ մեզ իբրեւ Հայոց Հայրապետ: Իրօք ու աւէն տեղ, տեղական պայմաններու տակ անխտիր կը ճառագայթէ նոյնանման ոգին, որ հայկական ոգին է, յաւերժական Հայաստանի ոգին:

Վեհափառին մեղրածոր խօսքերէն վերջ երիտասարդները Մայր Աթոռին պատկերովը պատրաստուած խոշոր «թուրթ» մը սեղան բերին, Վեհափառը զայն հանդիսաւորապէս կտրեց և որ մաս առ մաս բաժնուեցաւ ներկաներուն:

Այս բարեբաստիկ այցելութեան առթիւ, Հաճնոյ Հայրենակցական Միութեան կեդր. վարչութիւնը Վեհափառին տրամադրեց հազար տոլար, Սայր Աթոռի պէտքերուն համար:

Հ. Բ. Բ. ՄիոնիթՅԱՆ ՍԱՐԵԱՆ, ԱԿԱԳԵՄԻԱ ՀՈՒՆՁՔԸ— Անցեալ տարի Սարեան Ակադեմիան բոլորեց իր 12-րդ տարեգարձը և իր երէց սաներէն 7 երիտասարդ-երիտասարդուհիներ կեանքի ասպարէզ նետուեցան արուեստի ուղիով: Այս երիտասարդներէն Հրայր Տարագճեան և Սարգիս Պարմանուկեան այժմ կ'ուսանին Երեւանի Գեղարուեստի ինստիտուտին մէջ: Քանդակագործ Թորոս Ռաստկելիսեան և նկարիչ Հրաչ Պարսումեան Փարիզ մեկնած են իրենց արուեստին հնտեւելու համար: Գէորգ Գասապեան այժմ Գանատայի մէջ կ'ուսանի, իսկ Անահիտ Շահինեան Սան Փաւլոյ Արուեստի հիմնարկը յոջու-

ղութեամբ աւարտած է: Այժմ ունինք նոր ուժեր, գլխաւորապէս տասէն վեր խայտափթիթ սերունդ մը, որ օրինակելի կարգապահութեամբ կը հետեւի ահալեմիայի դասընթացքին և որ գլխաւոր մասնակիցը հանդիսացաւ 15 Գեղտեմբեր 1967-ին կազմակերպուած տարեկան ցուցահանդէսին:

ՆՂՐ ՆՈՒԻԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ Մ — Հ. Բ. Բ. Միութեան Սուբիոյ Ծրջ. Յանձնաժողովին արժանաւոր Ատենապետ և համբաւաւոր ակնբայթ Տոքթ. Թոքէր Ճէպէճեան 10,000 ոսկի նուիրած է Միութեան, մշակութային ձեռնարկներու համար:

ԱՆԳԼԻԱ - ԼՈՆՏՈՆ.— Վերջերս Հայ Տան մէջ բացոււր կատարուեցաւ Տիկին Վալա Սաչատուրեանի նկարներու ցուցահանդէսին: Ներկայ էին հայ և օտար աբուեստագէտներ ինչպէս նաեւ Սովետ. դեսպանատան մշակութային կապերու փոխ վարիչ Չուբարով:

Տիկ. Վ. Սաչատուրեան, այրին միջազգային համբաւի տիրացած արուեստագէտ Սարգիս Սաչատուրեանի մեզի կը ներկայացնէր 27 իւղաներկերու և ջրաներկերու գեղեցիկ փունջ մը: Արուեստագէտի տաղանդը ու հայկականութիւնը, գոյներու ներգաշնակութիւնն ու շեշտակիութիւնը յստակօրէն կը գրսեւոտուին անոր նկարներուն մէջ: Արուեստագիտուհին սիրած է ծաղիկները փոքր տարիքէն: Տակաւին կը սիրէ զանոնք ու գիտէ նկարել՝ պաստտոլին նուիրելով փնջիկ մը ներք տաքուկ է, կենդանի և ծաղկաւետ:

Ամուսնոյն մահէն վերջ, նկարչութիւնը միակ և լաւագոյն բարեկամն է եղած, ըսաւ Տիկ. Վալա մեր տեսակցութեան ընթացքին: Թէեւ Տիկինը վրձինը նոր է ձեռք առած, բայց այն տպաւորութիւնը կը թողու թէ անխոնջ աշխատանքով իր հոգիին մէջ անթեղուած երազներուն կեանք գոյն և յաւերժութիւն տալու անսպառ խանդավառութիւնը և վրձնակամութիւնը ունի:

Եղած է Մայր Հայրենիք և հոն առած է նոր ներշնչումներ:

Andante amoroso

Դի՞մ կա-րո-
 ցո՞ւյ
 ու նոր
 սի
 րո՞ւյ,
 Դա-՛նձը-ճա-կա՛ւ,
 Ան-
 ճե՛ն ա՛ն-ճար,
 Դե՛ Ե-րե-՛վան
 Ա՛նձը յճո՛ց ցո՛ւսեր - ջո՞ւյ, -
 Ա՛նձը սի-րո՞ւյ ու հե՛.
 Կո՞ւյ
 Հայ-սե-րի ճե՛զ բար-ճա-յա՛մ, շո՛ւ ԿԵ՛ջ
 Ան-ճե՛ն ու ա՛ն-ճար,
 Չո՞ց Ե-րե-՛վան
 Ը՛ն-հա-սա-կո՞յ հո-սարո՞ց,
 Բա՛ ԿԵ՛ս-ճո՞ւյ ԿԵ՛.
 Կար՛բ,
 Ա՛նձը հայ-ԿԵ՛րի օր-բան,
 Ա՛նձը
 Ծա՛յր,
 Հայօ՛ Ե-րե-
 վան

Լ Ո Յ Ս Ե Ր Ե Ի Ա Ն

Խօսիչ՝ Գ. ԲՈՐԵԱՆԻ
 Երաժշտ. Ա. ԱՃԷՄԵԱՆԻ

Հի՛ն կարօտո՞յ ու նոր սիրո՞յ
 Յաւերժակա՛ն,
 Անկե՛ն-անկա՛ւ
 Ի՛նձ երեւան:

Մե՛ր մեռնո՞յ ու երգո՞յ,
 Մե՛ր սիրո՞յ ու հեռնո՞յ,
 Լոյսերի մե՛ջ քարճարացած, շփո՞յ,
 Անկե՛ն ու անկա՛ւ,
 Ե՛րբ երեւան:

(Կրկնէրգ).

Քո հասակո՞յ հպարտ.

Քո ճեւո՞յ զուարթ,

Մե՛ր յոյզերի օրրան,

Մե՛ր մայր, յոյս երեւան:

Իսկ փեղանի՞ց միջո՞ս անբաժան,

Միջո՞ս փայտառած,

Անկե՛ն-անկա՛ւ.

Ծո՞ւյ երեւան:

Ուր զնա՛ն, ուր մե՛նա՛ն,
 Քե՞զ հե՛տ միջո՞ս կը մե՛նա՛ն,
 Հեռունե՛րից դու եկած, շահե՞յ
 Անկե՛ն ու անկա՛ւ,
 Ե՛րբ երեւան:

(Կրկնէրգ):

Երեւանի 2750-ամենակի նուիր-
 ուած շաւազոյն երգերի մրցա-
 նակարարչութիւնում այս սեղ-
 ծագործութիւնն արժանացել է
 երրորդ մրցանակի:

Հ Ա Յ Ի Ե Ն Ի Ք Ի Ս Հ Ե Տ

Վաղուց քէտ իմ հայեացքը Անյայտին է ու հետուում
 Ու իմ սիրքը իմ մտքին հետ անհուններն է քալառում,
 Բայց կարօտով ամէն անգամ երբ դառնում եմ դեպի քեզ՝
 Մըղկեում է սիրսս անվերջ քո բառանշից աղեկէզ,
 Եւ գաղթախան գաւաղներիդ լուռ շարերից ուժասպառ,
 Եւ գիւղերից, եւ շէներից տրխու՛ւր, դասարկ ու խաւար,
 Զարկուած հայրենիք, զրկու՛ած հայրենիք:

Խրոնրուում եմ մտքիս հանդէպ բանակները անհամար,
 Տրորում եմ քո երեսը, քո դաշտերը ծաղկալիւս,
 Ու ջարդարար վոհմակները աղաղակով վայրենի,
 Աւարներով, աւերներով, խնջոյճներով վայրենի,
 Որ դարձրին քեզ մշտական սեւ ու սուգի մի հովիտ,
 Խեղճ ու շղկան քո երգերով, հայեացքներով անժպիտ,
 Ողբի՛ հայրենիք, որբի՛ հայրենիք:

Բայց հիկն ու նոր քո վերջերով կանգնած ես դու կենդանի,
 Կանգնած խոհո՛ւն, խորհրդաւոր ձանքին նորի ու հրնի,
 Հառաչանկով սրբի խորհի խօսք ես խօսում Աստու հետ,
 Ու խոհում ես իրին խորհուրդ սանցանկներում յարադէտ,
 Խորհում ես դու եմ մեծ խօսքը, որ քի ասես աշխարհին
 Ու պիտ դառնաս եմ երկիրը, ուր արգտում է մեր հոգին—
 Յոյսի՛ հայրենիք, լոյսի՛ հայրենիք:

Ու պիտի գայ հասնուր կեանքի աշխարհքը վառ հագած,
 Հագար հագար լուսապաայծառ հոգիներով ձառագած,
 Կենսածպիտ իր շողերը պիտի ժրպատն առաջին,
 Ու պոէսներ, որ չեն պղծյ իրենց շուրքերն անեծքով,
 Պիտի գովեն քո նոր կեանքը, նոր երգերով, նոր խօսքով:
 Իմ նո՛ր հայրենիք, հրզօ՛ր հայրենիք:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

(Կենսագրութիւն)

Ծնած է Լոռիի Դսեղ գիւղը (այժմ Թումանեան)՝ 19 Փետր. 1869ին, քահանայի ընտանիքի մէջ: Մանկութիւնը անցուցած է հայրենի գիւղին մէջ, եւ բնութեան գեղեցկութիւնները ազդած են իր վրայ. լեռնագագաթներ, սարահարթներ, սաղարթագեղ կոյս անտառներ, Դեբեդ գետի դղրդիւնը Լոռիի ձորին մէջ...:

Գիւղին մէջ կարգաւ-գրել սորվելի ետք, կ'անցնի Զալայողլի, յետոյ ջորս տարի Ներ սիսեան դպրոցը, զոր ջհ աւարտած:

Ակսած է գրել մանուկ հասակէն: 1830 ին արդէն հեղինակ էր եւ գրած՝ «Հին օրհնութիւն», Գոթրանի երգ», «Շունն ու Կատուին», «Անբախտ վանառականներ», «Մարօ», «Լոռեցի Սարօ», «Զարին վախճանը». «Արծիւն ու կաղնին» եւն.:

Ղազարոս Աղայեանի միջոցաւ՝ 1889ին «Աղբիւր» ամսագրին մէջ կը տպուի Թումանեանի «Արեւն ու լուսինը», իսկ 1889ին՝ Մոսկուայի մէջ լոյս կը տեսնէ անոր բանաստեղծութիւններուն առաջին հատարածն: «Անուշ»-ի նախնական փոփոխակը կը տպուի 1901ին:

Միաժամանակ՝ կը գրէ արձակ, եւ առաջին առօրին՝ «Գիգոր»ը: 1900 եւ 1904 կը գրէ «Փարոսանա», «Թմբկաբերդի առուներ», «Սասունցի Դարիք», եւ կը վերամշակէ «Անուշ»ը:

1903ին եւ 1908ին կը հրատարակուին բանաստեղծութեանց նոր հատորներ: Կը մասնակցի «Հայ Գրողներ» զոյգ հատորներու պատրաստութեան. ինչպէս նաեւ «Լոռսաբերդներու շարքին» Լ. Շանթի եւ Ստ. Լիսիցեանի հետ:

Թումանեան եղած է Թիֆլիսի Հայ Գրողներու Ընկերակց. նախագահ: Հայաստանի խորհրդայնացումէն ետք՝ նախագահ Հայաստանի Օգնութեան Կոմիտէի (ՀՕԿ) եւ այցելած Պոլիս՝ 1922ի գարնան, նպաստելով «Հայ Արուեստի Տան» կազմութեան:

1923ին Թումանեան կը գտնուէր Մոսկուա: Կ'ուզէր այցելել Պերլին՝ գարմտել տալու համար իր հիւանդութիւնը: Բայց մահը վրայ կը հասնէր Փետր. 23ի երեկոյեան՝ սուգի մատնելով զինք սիրող աշխարհը, ա-

րեւելքէն արեւմուտք:

Իր գործերը տպուած են բազում անգամներ, իբրեւ ամբողջական երկեր, շքեղ ու պատկերազարդուած հատորներով՝ ներկայ Հայաստանի պետական Հրատարակչականին ջանքերով:

Այս տարի Հայաստանի քե սփիւռքի ամեն կողմերը՝ Թումանեանի ծննդեան 100 ամեակի յօբելեանը սօնուհեցաւ մեծ շուքով եւ դեռ կը շարունակուի:

Տ Խ Ր Ո Ւ Ն Ի

Գահիրէի Հ. Բ. Ը. Միւլթիւնը տըխուր հարկին տակ կը գտնուի արձանագրելու անգարձ կորուստը մեր հետեւեալ անդամ-անդամուհիներուն.

1. — Սեպտեմբեր 2-ին տեղի ունեցաւ անակնկալ մահը Պերձ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ, որ անդամակցած էր Միւլթեանս վարչական կազմին և իր ժրջան գործունէութեամբը օգտակար հանգիսացած:

2. — Սեպտեմբեր 25-ին, սգացինք մահը ԱՆԳՐԱՆԻԿ ՊՕՂԻԿԵԱՆԻ, երկարամեայ և հաւատաւոր մէկ անդամը մեր ազգանուէր Միւլթեան:

3. — Սեպտեմբեր 27-ին հողին յանձնեցինք Գահիրէի Ազգ. Թեմական խորհուրդի անդամ և Քաղաքական ժողովի Բ. ատենապետ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԳԱՐԱՅԵԱՆը: Հանգուցեալը օգտաշատ անձնաւորութիւն մըն էր և ամէն կերպով սատարող Միւլթեանս երիտասարդական շարժումին:

Յուզարկաւորութեան նախագահեց Ազգայնագրից Առաջ. փոխանորդ Տ. Զաւէն Ս. Եպիկ. Չինչինեան և հանգուցելոյն մարմինը ամփոփուեցաւ Ամենայն Սբրոց գերեզմանատան մտաւորականներու թաղին մէջ:

4. — Լոնտոնէն կը գուժեն մահը Տիկ. ԼՈՂԱ ԿՈԿԱՆԵԱՆԻ, որ տեղի ունեցած է Դեկտեմբերի սկիզբը և յուզարկաւորութիւնը կատարուած է տեղւոյն Սբ. Սարգիս եկեղեցին:

5. — Կը սգանք նաեւ մահը ԳՐԻԳՈՐ ՃՌՃՌԵԱՆԻ, որ տեղի ունեցաւ Դեկտ. 18ին:

Հ. Բ. Ը. Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն Մ Ա Մ Ո Ւ Լ Ը

ՅՈՒՇԱՐԱՐ - ՄԻՈՒԹԻՒՆ

Պատճօնաբերք Հ. Բ. Ը. Միութեան
Հիմնադիր՝ Պօղոս փառա Նուպար

HOOSHARAR - Անգլիերէն Հրատարակութիւն

Հասցէ. — Armenian General Benevolent Union

109, East 40th Street

New - York N. Y. 10016.

ՆՈՐ ՇԻՆԱՐԱՐ

Հրատարակութիւն Հ. Բ. Ը. Միութեան Եւրոպայի
Շրջանակային Կեդրոնական Ֆանձնաժողովի.

Հասցէ. — 11, Squar Abboni Paris 6^{me} FRANCE

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

Հրատարակութիւն Գահիրէի Հ. Բ. Ը. Միութեան

Հասցէ. — 15, Էմաս էլ Տի փողոց — Գահիրէ
Փոստակոչ 717

Խ Օ Ս Ն Ա Կ

Պատճօնաբերք Հ. Բ. Ը. Միութեանն Լիբանանի
Շրջանակային Ֆանձնաժողովի

Հասցէ. — Նամակասուի 715, Պէյրութ.

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ — ԳԱՆԻՐԷ

Գահիրեի Հ. Բ. Ը. Միութիւնը հանույրն ունի տեղեկացնելու պատուարժան հանրութեան թէ, իր հիմնած

ԵԱԳՈՒՊ ԱՐԹԻՆ

գրադարանը որ կը գործէ 1958էն ի վեր, իր տրամադրութեան տակ ունի գրական, պատմական, գեղարուեստական, կրօնական եւ բանասիրական. ինչպէս նաեւ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ գիրքերու նոյն մթերք մը, որմէ կրնան օգտուիլ մեր ընթերցասէր անդամները եւ Գահիրեի հայութիւնը անխտիր, առանց որեւէ վնարումի:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



ՏԵՂԵԿԱՏՈՒՆ Վճարովի չէ

Շնորհակալութեամբ կ'ընդունինք նուէրներ, մեր այս ձեռնարկը աւելի նոյն եւ շահեկան ընծայելու համար:

— Ասանալու համար գիմել խմբագրութեանս,
15, Էմաս Էլ Տին փողոց Ա. յարկ — Գահիրէ



ՏՊ. «ԱՐԳՈՍ» ԳԱՆԻՐԷ — ՀԵՌ. 56864

رقم الايداع بدار الكتب ٣٢٧